



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share – copy and redistribute the material in any medium or format

Adapt – remix, transform, and build upon the material

116

ՄԻԶՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ
ՀԱՍՏԱԿԱԳԻՑԻ ՏՈՒԹՅԱՆ
ԾՐԱԳԻՑ

Բ 23459

5 - 6 ԽՈՒՄԲ



ՊԵՏԱԿԱՆ ՊԻՍԱՄԱՆԿՃՐԱՏԲԱԺԻՆ
ՅԵՐԵՎԱՆ *

1 9 3 3

«Արդար»

աբիգում:

Պատ. խմբագիր՝ Մ Սանթրոսյան
Լեղվ. խմբագիր՝ Ա. Առաքամյան
Տեխ. խմբագիր՝ Գ. Զենյան. Արբագրիչ՝
Վ. Տերոյան. Պատվիր № 2173. Հրա-
տարակ. № 2769. Գլազըլիս № 8333(բ) Տի-
րաժ 1500. Հանձնված և արտադրու-
թյան 23 հոկտեմբերի 1833. Ստորագր-
ված և տպելու 8 նոյեմբերի 1833 Պետ-
հանակ ապարան, Ցերեվան:

ՄԻԶՆԵԿԱՐԳ ԴՊՐՈՅԻ ՀԱՍՏՐԱԿԱԳԻՑՈՒԹՅԱՆ
Մ Պ Ա Գ Ի Բ

Հ Ի Ն Գ Ե Բ Ո Ր Ո Ր Դ Խ Ո Ւ Մ Բ

1. ՄԱՐՔՍ ՅԵՎ ԵՆԳԵԼՍ

1. Ասցիալիստական ուսմութեները և բանվորական շարժումը մինչև Մարքս և Ենգելսը.

Սոցիալիստ ուսուպիստները և նրանց ուսմունքը. անտեսական ու քաղաքական անհավասարության ու դոյլություն ունեցող շահագործման վերլուծությունն ու դրա դատապարաւմը. այդ շահագործումը վերացնելու համար նրանց առաջադրած միջոցները, — հարուստներին ու շահագործողներին ապացուցել գոյություն ունեցող հասարակաբարդի կառուցման ու ակրող հարստահարման անարդարությունը և նրանց համոզել՝ հրաժարվել հարստահարելուց ու ոգնել կազմակերպելու սոցիալիստական հասարակություն։ Այդ բոլորի անիրական-ուսուպիստական լինելը և դրա պատճառները։ Բանվոր դասակաբարդի և բանվորական շարժման թուլությունը սկզբնական ըրջանում։

Բանվորական շարժման հանդես դալը. այդ շարժուածն առաջին արտահայտությունները. պայքար մեքենաների դեմ։ Բանվորական շարժման ավելի բարձր աստիճան 19-րդ դարի 30-ական թվականներին։ Կերպներական ապստամբությունները։

Պրոֆմիությունների կազմակերպվելն Անդիայում 1836 թ. բանվորական առաջին կուսակցության չարտիստների կազմակերպումը։

«Արդարագալատների միության» կազմակերպումը Փաբլիում։ Բանվոր դասակաբարդը դեռ չուներ իր ուսու-

ու ունքի ստեղծումը Մարքս-Ենգելսի կողմից։ Մարքսն ու Ենգելսը ապացուցեցին ուստոպիստ սոցիալիստների ուսմունքի վոչ գիտական լինելը և ստեղծեցին պրոլետարական ուսմունքը՝ գիտական սոցիալիզմը։ Մարքսն ու Ենգելսն ուսումնասիրեցին հասարակության զարգացման որենքները և ցույց տվին այն ուղիներն ու միջոցները, վորով բանվոր դասակարգը կարող եւ ազատագրվել կապիտալի շղթաներից։

2. Մարքսի մանկական և պատանեկական տարիները.

Մարքսի համառոտ կենսագրությունը. նրա ծննդավայրը ծնողները, ուսման տարիները գիմնազիայում և համալսարանում. նրա հասարակական գործունեյությունն այդ տարիներում։

3. Մարքսի հեղափոխական գործունեյության սկիզբ.

Գերմանիայի տնտեսական-քաղաքական հետամնացությունն այդ շրջանում. մանր արհեստավորական-տնտեսագործական արտադրության գերակշռությունը, խոշոր արդյունաբերության թույլ զարգացումը։

Հունոսի շրջանի համեմատաբար առաջավոր լինելը: Բանվորների և արհեստավորների ծանր գրությունը 30-ական թվականներին։

Սիլեզիայի ջուհակների ապստամբությունը 1844թ. նման ապստամբություններ Գերմանիայի մյուս շրջաններում։ Արհեստավորների և բանվորների սակավաթիվությունը։ Ազգարնակության գերակշռող մասը դրույդացիությունն եր։

Ազնվականությունը (յունկերություն), վորապես տիրող դատակարդ յերկրում։ Յերկրում գերազույն իշխանությունը դանիում եր իշխանների և թաղավորների ձեռքին։ Դերմանիան կազմված եր փոքր պետություններից (38), վորոնց միջև կապը չափազանց թույլ եր։ Նման գրությունը խանգարում եր առեւտրի և արդյունաբերության զարգացմանը։

Դժգոհությունն առանձնապես ուժեղ եր Հունոսի հաստիացան արդյունաբերական շրջանում։ «Հունոս-

յան լրագրի» հիմունմը: 1842թ. Կ. Մարքսը դլխավոր աշխատակից և հետո խմբագիր:

«Հեռուսոյան լրագրի» մէջոցով Կ. Մարքսի պայքարը հին կարգերի դեմ: Թերթի փակումը և Մարքսի տեղափոխվելը Գրարիդ:

Է. Ֆր. Անգելս. Կ. Մարքսի և Ենգելսի մտերմության սկիզբը.

Ենգելսի համառոտ կենսագրությունը. Նրա առաջին հոնդիսումը Կ. Մարքսի հետ: Ենգելսն Անգլիայում ծանոթանում և անգլիական բանվորական շարժմանը և ակտիվ կերպով մասնակցում ու ոժանդակում ե դրան:

Բանվոր դասակարգի ծանր դրությունն Անգլիայում: Հեղափոխական բանվորական շարժման ուժեղասուլը: Զարտիստական շարժման ծավալումը վորապես անգլիական պրոլետարիատի պայքարը բուրժուազիայի դեմ: Զարտիզմը վորապես «առաջին լայն, փոկապես մասսայական, քաղաքականապես ձեւավորված՝ բանվորական չեղափոխական շարժում»:

Ենգելսի մասնակցությունը և ոժանդակությունը չարտիստական շարժման: «Բանվոր դասակարգի դրությունն Անգլիայում» աշխատությունը:

Կ. Մարքսի և Ենգելսի մտերմությանը նպաստում և նրանց հայացքների միատեսակ լինել բանվոր դասակարգի ազատագրման ուղիների նկատմամբ:

1844թ. Ենգելսը Փարիզում:

Մարքսը և Ենգելսը միասին մշակում են իրենց ուսմունքը: Նրանց հետագա միատեղ աշխատանքը և հեղափոխական պայքարը:

5. Մարքսը Բրյուսելում.

Մարքսի հեղափոխական աշխատանքը Փարիզում: Նրա պայքարը Պրուսիայի դեմ: Վերջինիս առաջարկությումը Մարքսի արտաքսումը Ֆրանսիայից: Մարքսը Բրյուսելում: Հեղափոխական աշխատանքի շարունակությունը: «Ինքնակրթության բանվորական ընկերության» կտղմակերպումը:

ստեղություն։ Հեղափոխության պարտությունը։ Լրադրի դադարեցումը։ Մարքսը տեղափոխվում է Փարիզ, մորաեղից ել հարկադրված է լինում անցնել Լոնդոն, ուր և մնում է մինչև իր կյանքի վերջը։ Ենգելսի մասնակյությունը բարիկադային պայքարին։

9. Մարքսը Լոնդոնում.

Մարքսի կրած հայածանքները հաղթած հակահեղափոխության կողմից։ Մարքսի և նրա զինակիցների դեմ պրուսական կառավարության կազմակերպված դատական պրոցեսը։

Հեղափոխության պարտությունից հետո Մարքսն ուսումնասիրում է նրա փորձը։ Նա շարունակում է պայքարել իր հայացքների համար և բանվոր դասակարգին նախապատրաստել նոր մարտերի համար։ Ծանր նյութական պայմաններում, համարյա կիսաքաղց վիճակում, նա պատրաստում է հրատարակում և իր դլիսվոր՝ «Կապիտալ» անունով աշխատությունը։

10. Կ. Մարքսի «Կապիտալ»-ը և նրա նշանակությունը.

Այս աշխատության մեջ Մարքսն ամբողջացած ձեռվայրին է իր ուսումնասիրումը։ Կապիտալիստական հասարակության մեջ աշխատավորության հարստահարման հիմնական պատճեռը մասնավոր սեփականությունն է։ Մարքսը մանրամասն կերպով ուսումնասիրում է կապիտալիստական հասարակության զարգացման որենքները, նրա կործանման անխուսափելիությունը, կապիտալիստական հասարակության փոխարինումը կոմունիստական հասարակությամբ։ բանվոր դասակարգը կապիտալիզմի գերեզմանափորը և նոր հասարակության կառուցողն է։

11. Մարքսը I-ին ինտերնացիոնալի կազմակերպողը և առաջնորդ.

1860 թ. բանվորական շարժման նոր վերելք։ Մարքսին և Ենգելսին այժմ հաջողվում է ստեղծել պրոլետարատի միջազգային կուսակցություն՝ «Բանվորների

միջազգային ընկերություն», վորը հետագայում սկսեցին անվանել Ի-ին ինտերնացիոնալ: Այդ ընկերության կազմակերպումը 1864 թ. Լոնդոնում,՝ զարգացած արդյունաբերություն և ուժեղ բանվոր դասակարգ ունեցող յերկրում՝ Անգլիայում: Ի-ին ինտերնացիոնալի հսկայական նշանակությունը բանվոր դասակարգի համար: Ի-ին ինտերնացիոնալի կառուցվածքը. նրա դիխավոր խորհուրդը և նրա կազմակերպություններն առանձին յերկրներում: Մարքսը դիխավոր խորհրդի անդամ և Ի-ին ինտերնացիոնալի իրական դեկավար: Ի-ին ինտերնացիոնալի դործունեյությունը տարբեր յերկրների բանվորների համար էամախմբման նրանց պայքարի ու փոխադարձ ստանդակության կազմակերպման բնագավառում: Տարբեր յերկրներում բանվորական շարժման զարգացման տարրեր աստիճանները. հետամնաց յերկրների դեռչղարգացած բանվորական շարժման արտահայտությունը Ի-ին ինտերնացիոնալի մեջ. (Պրուդոն, Բակունին), Մարքսի և Ենգելսի անհաջող պայքարը դրանց դեմ:

12. Մարքսը և Փարիզի կոմունան.

1871 թ. Փարիզի կոմունան: Մարքսի ողնությունը կոմունային և նրա աշխատանքներին: Մարքսն ապացուցեց, վոր կոմունան հանդիսանում է բանվոր դասակարգի կառավարություն, նոր հասարակակարգի նախակարապետ: Կոմունայի պարագությունը: Մարքսի ողնությունը կոմունալի եմիգրանտ անդամներին: Կոմունայի պարտության անդրադարձումն Ի-ին ինտերնացիոնալի քայլայման արագացման վրա: Ի-ին ինտերնացիոնալի կազմալուծումը: Ի-ին ինտերնացիոնալի կատարած գերբը և պատմական նշանակությունը: III-րդ ինտերնացիոնալը Ի-ին ինտերնացիոնալի դործը շարունակողն է:

13. Մարքսի կյանքի վերջին տարիները.

Լարգած հեղափոխական աշխատանքը, մշտական նյութական կարիքն ու կյանքի վատ պայմանները քայլայում են Մարքսի առողջությունը: Մարքսի մահը 1883 թ. մարտի 14-ին:

14. Ենգելսը Մարքսի գործի շարունակող.

Մարքսի և Ենգելսի 40-ամյա միատեղ աշխատանքն ու պայքարը: Մարքսի մահից հետո Ենգելսը կարգի յերբում ու հրատարակում Մարքսի թողած աշխատությունները: Մարքսի մահից հետո Ենգելսն ե ղեկավարում միջազդային բանվորական շարժումը, պայքարելով Մարքսի հեղափոխական ուսմունքի ամեն տեսակ աղաղաղությունների դեմ: Ենգելսի մահը 1895 թ. ոգոստոսի 5-ին:

15. Մարքս վորպես գիտնական-հեղափոխական.

Մարքսը վարպես մարտիկ հեղափոխականի և գիտնականի տիպար: Բայ Մարքսի գիտությունը պետք է ծառայի հեղափոխության գործին: Մարքսի անհաշտ պայքարն իր ուսմունքի համար, դրա բոլոր աղաղաղումների դեմ: Մարքսը բանվոր դասակարգի իսկական տուածնորդ, կաղմակերպիչ և ղեկավար:

16. Ինչպես եր աշխատում Մարքսը.

Մարքսը չափազանց կրթված և զարգացած մարդ երնա կարդում եր յեվրոպական բոլոր լեզուներով: Նրա գիտելիքները չափազանց բազմազան եյին. նա զբաղվում էր մաթեմաթիկայով, բնագիտությամբ, փիլիսոփայությամբ, տնտեսագիտությամբ, պատմությամբ, գրականությամբ: Նրա գիտելիքները չատ խոր և հիմնավոր եյին: Նա չափազանց բարեխիղճ եր վերաբերվում դեպի իր հավաքած տեղեկությունները և իր գրած աշխատությունները: Նա վոչ մի ջանք չեր խնայում դրա համար:

17. Մարքսը և յերեխանները.

Մարքսը շատ եր սիրում յերեխաններին: Նա նրանց չընանում մեծ բավականություն և իսկական հանգիստ եր դունում: Նրա ընկերական վերաբերմունքը դեպի եր յերեխանները: Մարքսը և աճող սերնդի դաստիարակու-

թյան խնդիրները։ Բազմակողմանի պոլիտեխնիկական դաստիարակության խնդիրը և դրա իրականացման պայմանները։

18. Մարքսի, Ենգելսի ուսմունքի նշանակությունը միջազգային բանվորական շարժման համար։

Մարքսը, Ենգելսն ասլացուցեցին կապիտալիզմի կործանման և կոմունիստական հասարակության կառուցման անխուսափելիությունը։ Նրանք ապացուցեցին ուրուկտարական հեղափոխության և պրոլետարիատի դիկտատորայի անհրաժեշտությունը բանվոր դաստիարակի պայքարի և հաղթանակի համար։

II ՀԵՆԻՆ

19. Լենինը բարձրացրեց Մարքս-Ենգելսի դրոշը։

Մարքս և Ենգելսի մահից հետո բանվորական շարժման դեկավարությունն անցնում է 19-րդ դարի 70-80 թ.-առաջնորդած սոցիալիստական կուսակցություններին։ 1889 թ. II-րդ Խնտերնացիոնալի կազմակերպումը։ Մարքսի Ենգելսի մահից հետո ուղղորդունիզմի զարգանալը և ուժեղանալը սոցիալիստական կուսակցությունների մեջ։ Ոպորտունիզմի զարգացման և ուժեղացման ողատճառները։ Աջ ոպորտունիստական և ձախ հեղափոխական հոսանքները II-րդ Խնտերնացիոնալի ներսում։ Լենինը վորագես ձախ հոսանքի ներկայացուցիչ, նրա պայքարը ուղղորդունիստական հոսանքի դեմ։ Կապիտալիզմի հետագա զարգացումը։ բանվոր դասակարգի շահագործման ուժեղացումը և դասակարգային պայքարի հետագա սրումը։ II-րդ Խնտերնացիոնալի սնանկացումը և բանվոր դասակարգի շահերին վերջնականացես զավաճանելը։ Նոր հեղափոխական կազմակերպության անհրաժեշտությունը։ Լենինը և բոլշևիկների կուսակցության կազմակերպումը։

70-80-ական թթ. Առուաստանը վորպես տնտեսապես հետամնաց յերկիրք: Ճորտաբայի բական կարգերի մնացորդները: Գյուղացիների ծանր գրությունը ճորտաբական կարգերը վերանալուց հետո: Գյուղացիության հետապնդումը. պըրոլետարիզացիա:

Արդյունաբերության դարգաշումը ճորտատիրության վերացումից հետո: Ճորտատիրական կարգերի մնացորդները և կապիտալիզմի անկաշկանդ զարգացման արդելակումը:

Բանվորների չափաղանց ծանր գրությունը: Առաջին բանխորական գործադուլները 70-ական թվականներին. այդ գործադուլների տարերային բնույթը: Պրոետարական հեղափոխության կուսակցության բացակայությունը:

Նարոդնիկական շարժումը, նրանց սխալ տեսակետը Առուաստանում կապիտալիզմի զարգացման ու գյուղագրության հեղափոխական դերի մասին: Գյուղացիական համայնքը սոցիալիզմի հիմք: «Ժողովրդի մեջ գնալ»—ը, գրա անհաջողությունը 1879 թ. նարոդնիկների բաժանվելը յերկու մասի: « Հարուսակ Վոլյա » « Չերնի »: Տեսողի քաղաքականությունը. նարոդնիկական շարժման անհաջողությունները և գրա պատճառները: 70 թվ. բանվորական առաջին խմբակները. 80 թվ. գորագությունների ուժեղանալը: Որեխսով—Զումեի Մորոզվոյան գործադադուլը, վորը զեկավարում են բանվորներ Մոլոնկու և Վոլիկով:

21. Լենինի մանկության և պատանեկության տարիները.

Լենինի համառոտ կենսագրությունը. նրա ծնողները. ընտանիքը: Լենինի գիմնազիական տարիները. հեղափոխական տրամադրություններ. նրա յեղբոր՝ Ալեքսանդրի հեղ. գործունեյությունը, մահապատիճը: Լենինը համալսարանում. ուսանողական հուզումներ. Լենինի մասնակցությունը դրանց: Լենինի հեռացումը հա-

մայսարանից և աքսորվելը կուկուշկինո դյուզը: Մարք-
սի-Ենգելսի ուսմունքի ուսումնասիրությունը: Սամ-
բայում մարքսիստական խմբակ կազմակերպելը:

22. Լենինը Պետերբուրգում.

Նրա մասնակցությունը մարքսիստական խմբակ՝
աշխատանքներին: Ծուտով նա դառնում է դրա ղեկա-
վարը: Լենինի նախաձեռնությամբ Պետերբուրգի ձեռ-
նարկություններում կազմակերպվում են մարքսիստա-
կան խմբակներ: Նրա աշխատանքն այդ խմբակներում:
Պայքար նարոդնիկների հայացքների դեմ: 1894 թ. նրա
աշխատությունը «Ովքե՞ր են ժողովրդի բարեկամները և
ինչպես են նրանք պայքարում ուղղ. դեմ»:

23. Պետերբուրգի «Բանվոր դասակարգի ազատազրման պայքարի միությունը».

1895 թ. Լենինը կազմակերպում է «Բանվոր դասա-
կարգի ազատազրման պայքարի միությունը»: Այդ
խմբակի աշխատանքները. պայքարը նարոդնիկների և
եկոնոմիստների դեմ:

24. Լենինի ձերբակալվելը, բանտը և աքսորը.

Լենինի հեղափոխական աշխատանքները, շարական
կառավարության հետապնդումները և նրա ձերբակա-
լումը 1895 թվին: 1897 թվին նա աքսորվում է
Սիբիր: Աքսորից նրա կապը ընկերների հետ:
Աքսորում գրում է «Կապիտալիզմի զարգացումը Ռու-
սաստանում»—.

Լենինն աքսորում մեղած ժամանակ կուսակցության
լին համագումարը 1898 թ.: Աքսորում Լենինը նախա-
պատրաստում է «Իսկրա» թերթի հրատարակությունը:

25. «Իսկրա»-ի ժամանակաշրջանը.

«Իսկրա»-ի հրատարակումը 1900 թվ.։ «Իսկրա»-ի
պայքարը եկոնոմիստների դեմ: «Իսկրա»-ի և անլիդալ
դրականության տեղափոխումը Ռուսաստան:

Լենինի տեղափոխումը Հոնդոն: 1902թ. Լենինի «Բնէ աներ» աշխատության հրատարակումը. նրա նշանակությունը հեղափ. կուսակցության և հեղափ. շարժման կազմակերպման համար: Կուսակցության Արդ համագումարի հրավիրման համար կազմակերպչական կոմիտե կազմակերպելը:

26. Կուսակցության 2-րդ համագումարը: Կուսակցության պառակտումը.

2-րդ համագումարը՝ 1903թվին կուսակցության բաժանումը յերկու մասի՝ բոլշևիկների և մենչևիկների: Պառակտման պատճառները. Լենինի տեսակետը, թե ով կտրող և լինել կուսակցության անդամ: Մենչևիկների տեսակետը: Համագումարից հետո մենչևիկների պայքարը բոլշևիկների դեմ: «Խոկրա» թերթը մենշևիկների որդան և դառնում. «Վորեծ» բոլշևիկյան թերթի հրատարարակումը: 80—90-ական թ.թ. հեղափոխական շարժումների ուժեղանալը Ռուսաստանում: 1901թ. Ռուսիովի գործարանի բանվորների գործադուլը: Գյուղացիական շարժումներն այդ թվերին: Ռուս-Յապոնական պատերազմը և հեղափոխական վերելքի ուժեղացումը:

27. 1905թ. հեղափոխությունը.

Ռուս-Յապոնական պատերազմը: Յարական իշխանության սպասելիքները այդ պատերազմից. ցարական բանակի պարտութելը և հեղափոխական ալիքի վերելքը. գործադուլներ Պետերբուրգում, Սորմովում. ընդհանուր գործադուլ Բագվում: 1905թ. գործադուլը Պետերբուրգի Պուտիլովի գործարանում: Մյուս գործարանների միացումը գործադուլին: Յարական իշխանությունը կազմակերպում և «Ռուս-գործարանա-Ֆաբրիկային բանվորների ժողովներ» ընկերությունը, վորինապատակներ բանվորներին հետ պահել հեղափոխական պայքարից. Ֆապոն քահանան այդ ընկերության ղեկավարը: Հունվարի 9-ի գեպքերը: Հունվարի 9-ի՝ Կարմիր կերակի նշանակությունը բանվորների դասակարգային գիտակ-

ցությունը պարզելու համար. հեղափոխական շարժման հետադա ծավալումը: Լենինի և բոլշևիկների աշխատանքը՝ բանվոր դասակարգի հեղափոխական պայքարը գլխավորելու և կազմակերպելու համար: Բոլշևիկների տեսակետը բանվորների և դյուղացիների հեղափոխական իշխանության մասին:

Մենչեւ կամ այսպիսի տեսակետը. — հեղափոխության դվիսավորություր պետք է լինի բուրժուազիան. բանվորությունը պետք է միայն ոգնե բուժուազիային:

Կուսակցության 2-րդ համագումարի գումարվելը Լոնդոնում

Համագումարի հարցերը (զինված ապստամբություն, ժամանակավոր հեղափոխական կառավարություն, դյուղացիական հարցեր):

1905 գործադուլցային շարժման ծավալումը: Հոկտեմբերյան ընդհանուր գործադուլը. խորհուրդների կազմակերպությունը Պետերբուրգում և այլ քաղաքներում: Ապստամբություններ բանակում և դյուղացիության մեջ: Ցարական իշխանության առհարկի զիջումները: Գետական գումարյի հրավիրման հայտարարությունը:

Բոլշևիկների և մենչեւ կամ միջնական հեղափոխության վերաբերյալ բոլոր հարցերի նկատմամբ տարածայնությունների խորացումը:

Բոլշևիկները պատրաստվում են զինված ապստամբությունն: Դեկտեմբերյան զինված ապստամբությունը: Դրա ուսարտությունը, հեղափոխության պարտության սկիզբը: 1905 թվի հեղափոխության պարտության պատճառները: Դյուղացիական շարժումների հետ մնալը և անհրաժեշտ կապի բացակայությունը բանվորական շարժման հետ: Անհրաժեշտ կապի բացակայությունը բանակի հետ: Բանվորական ապստամբությունների վասնականության ոժանդակությունը ցարական իշխանության և հեղափոխության արդելակումը: Միջազգային կապետակի ոգնությունը ցարական իշխանության՝ հեղափոխությունը ճնշելու գործում:

1905թ. հեղափոխության պատմական նշանակությունը:

28. Ռեակցիոնի և հեղափոխական նոր վերելքի շրջան...

1905թ. հեղափոխության պարտությունը և ռեակցիայի ուժեղանալը: Լենինի և բոլշևիկների տեսակնության և նրա պարտության վերաբերյալ.— պարտությունը ժամանակավոր ե, վորից հետո կակավի նոր հեղափոխական վերելք, վորի համար պետք ե նախապատրաստել բանվոր դասակարգին: Մենչեւկների լիկվիդատորների տեսակետոները.— հեղափոխությունը վերջացավ, պետք ե ընդհատակյա կազմակերպությունները լիկվիդացիայի յենթարկել: Լենինի և բոլշևիկների պայքարը մենցւիկների, լիկվիդատորների դեմ:

1910թ. վերջին հեղափոխական ալիքի նոր վերելքը: Դործագուլ Պետերբուրգում և ուրիշ քաղաքներում:

1912թ. Լենայի դեպքերը: «Պրավդա» թերթի հրատարակումը: «Պրավդա»—ի նշանակությունը հեղափոխական չարժումը կազմակերպելու խնդրում: Պրայայի կոնֆերանսը 1912թվին: Մենչեւկներից վերջնականապես անջատվելը: Ռուսաստանի և արտասահմանի կաղմակերպությունների կազի ուժեղացումը: Գործադուլային շարժումների ուժեղացումը Ռուսաստանում:

29. Խմբերի խաղիստական պատերազմ.

Պատերազմի սկզբին Լենինի բանտարկվելն Ավստրիայում: Բանտից աղատվելը: Արդ Ինտերնացիոնալի առաջնորդների դալմաճանությունը բանվոր դասակարգին: Բուրժուական հայրենիքի պաշտպանություն: Ռազմական վարկերի քվեարկում: Արդ Ինտերնացիոնալի առաջնորդները բուրժուական կառավարության անդամներ (Ֆրանսիա, Ավստրիա-Ավստրիա): Մարքսի հեղափոխական ինտերնացիոնալիստական ավանդներին պաշտպան և մնում սոցիալիստների համեմատաբար սակավաթիվ խմբակ՝ բոլշևիկների առաջնորդ Լենինի գլխավորությամբ: Նրանց պայքարը խմբերիալիստական պատերազմի և նրա սկաշտպան Արդ Ինտերնացիոնալի դեմ:

բարոր յերկրների հեղափոխական տարրերին կ մի հա-
մարտմքելու և կազմակերպելու վորձեր: Խմորերիակա-
ռական պատերազմը քաղաքացիականի վերածելու լո-
դունգը և պայքար դրա համար:

30. Ինքնակալության անկումը (փետրվարյան հեղափո-
խություն):

Բանվորների և գյուղացիների տնտեսական դրու-
թյունը հեղափոխության նախորյակին: Բանվորների և
գյուղացիության մեջ դժգոհության ուժեղացումը: Պո-
տիովի գործարանի գործադույր վետրվարի 25-ին: Ընդ-
հանուր գործադույրի սկիզբը: Փետրվարի 27-ը: Ժամա-
նակավոր կառավարության ստեղծումը: Ժամանակավոր
կառավարության քաղաքականությունը: Խորհուրդները
մենչեկիների ձեռքին: Լենինը Շվեցարիայից ղեկավու-
րում և հեղափոխությունը («Նամակներ Հեռվից»):
ցույց տալով հեղափոխության հետազա զարգացման և
այն սոցիալիստականի վերածելու անհրաժեշտությունը
ու ուղիները: Լենինի վերադարձն արտասահմանից: Լե-
նինի առաջին յելույթներն ու լողունգները: Նրա ապ-
րիլյան թեղիսները: Այդ թեղիսները կուսակցության
հետազա գործունեյության ծրագիրը: Բոլշևիկների հա-
մառուսական կոնֆերենցիան ապրիլի վերջերին: Բան-
վորները և զինվորները հետզհետե ազատվում: Են մենչե-
ղիկիների ազգեցությունից և անցնում են բոլշևիկների
կողմը: Մենչեկիկների բացարձակ անցումը ժամանակա-
վոր կառավարության կողմը, նրանց հակահեղափոխա-
կան քաղաքականությունը:

31. Հուլիսյան որեր: Լենինը կրկին ընդհատակում:

Բանվորները և գյուղացիները հետզհետե յերես են
թեքում ժամանակավոր կառավարությունից և անցնում
բոլշևիկների կողմը: Գյուղացիների առանձին յելույթ-
ները կալվածատերերի դեմ: Ժամանակավոր կառավա-
րության անհաջողությունները Փրոնտում: Հուլիսի 3-ի
դիմունների և բանվորների ցույցերը ժամանակավոր կա-
ռավարության դեմ: Որվա լողունգները: Ժամանակավոր
կառավարության դեմ: Որվա լողունգները: Ժամանակավոր

Հեղափոխական յելույթը։ Հեղափոխական բանվորների և բոլշևիկների հալածանքը։ Լենինը կըկին ընդհատակում։ Բոլշևիկները և Լենինը մասսաներին պատրաստում են դինված ապստամբության։

32. Հոկտեմբերյան եեղափոխություն.

Բոլշևիկների հեղափոխական և լայն բացատրական աշխատանքների հետևանքով՝ աշխատավորական լայն ժառանգում են նրանց կողմը։ Լենինը դնում է իշխանությունը զբավելու խնդիրը։ Լենինի տեղափոխվելը Պետերբուրգ ապստամբությունը մոտիկից և անձինապես զեկավարելու նպատակով։ Բոլշևիկյան Կենտրոմը ապստամբությունը սկսելու կողմնակից։ Զինովեի և Կամենեի գեմ լինելը զինված ապստամբության և իշխանությունը գրավելուն։ Լենինի պայքարը նրանց գեմ։ Ապստամբության գործնական նախապատրաստումը։ Դրա համար հատուկ մարմին կազմակերպելը։ Հոկտեմբերի 25-ի ապաստամբությունը։ Իշխանության գրավումը բոլշևիկների կողմից։ Խորհուրդների 2-րդ համագումարը։ Խորհրդային իշխանության հայտարարումը։ Ժողովրդական կոմիսարների խորհրդի կազմակերպումը։ Լենինի նախագահությամբ։

33. Խորհրդային իշխանության առաջին քայլը.

Խորհրդային իշխանության առաջին դեկրետները հողի մասին, բանկերի ազգայնացման, բանվորական կոնտրոլի մասին։ Հողի մասին դեկրետի առանձնակի նշանակությունը։ Հաշտության խնդիրը։ Կուսակցության 7-րդ համագումարը 1918 թ. և Բրեստի հաշտութան պայմանագրի ընդունելը համագումարի կողմից։ Խորհրդային իշխանության հերթական խնդիրները հաշտությունից անմիջապես հետո։

34. Քաղաքացիական պատերազմը.

Խուսական բուրժուազիան ոտարերկրյա բուրժուազիայի հետ կազմակերպում ե համառ պայքար խորհրդային իշխանության դեմ։ Խ. իշխանության դրության

ծանրանալլ. բուրժուազիան և նրա գործակալները կազմակերպում են սարտած, սպիտակ տերոր բոլշևիկ առաջնորդների դեմ (Վոլոդարսկու և Ռուբիցկու սպանությունը. մահափորձ Լենինի դեմ): Զինված ապստամբություններ յերկրի զանազան մասերում: Դրություննը բանակում: Լենինը զեկավարում ե քաղաքացիական պատերազմը և ամրացնում խորհրդ. իշխանությունը: 1919 թ. քաղաքացիական պատերազմների յեռուն ժամանակ հրավիրվում է կուսակցության 8-րդ համագումարը: Կուսակցության նոր ծրագրի ընդունելը այս համագումարում: գյուղացիության նկատմամբ լենինյան բանաձեվի ընդունումը համագումարի կողմից: Լենինը շարունակում է պայքարել ոպորտունիզմի դեմ և նախապատրաստում պրոլետարիատի միջազգային ուժերի համախմբումը՝ կոմունիստական ինտերնացիոնալի ստեղծումը: 1919 թ. Լենինի նախաձեռնությամբ բացվում է կոմունիստական ինտերնացիոնալի 1-ին կոնգրեսը: Քաղաքացիական պատերազմների տարիները և նորհրդային իշխանության տնտեսական քաղաքականությունը ռազմական կոմունիզմի ըջանում:

1918—21 թ. քաղաքացիական պատերազմների և ռազմական կոմունիզմի շրջան: Այդյունաբերության և գյուղատնտեսության անկում:

35. Քաղաքացիական պատերազմից դեպի սոցիալիստական շինարարություն.

Քաղաքացիական պատերազմների վերջը և ռազմական կոմունիզմից նոր տնտեսական քաղաքականության անցնելը. ժող. տնտեսության վերականգնման ինդիրը: Ազատ առեւտրի թույլատրումը: Մասնավոր կապիտալի թույլատրումն առեւտրի և մանր արդյունաբերության մեջ: Կապիտալիստական տարրերի ժամանակավոր անխուսափելի ուժեղացումը: Կուսակցության ծրագիրը և խնդիրը, —պրոլետարական պետության ձեռքին ունենալով ժողովրդական տնտեսության իշխող բարձունքները, հետզհետե դուրս մղել կապիտալիստական տարրերը ժողովրդական տնտեսությունից և ուժեղացնել սոցիա-

լիստական սեկտորը։ Լենինի ծրագիրը մեր յերկրում սոցիալիզմ կառուցելու և մանր, ցրված գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման մասին։

36. Լենինը յերիտասարդության խնդիրների և դպրոցի մասին։

Լենինի ճառը 1920 թ. կոմյերիտմիության Յ-րդ համագումարում առաջին հերթին սովորել սոցիալիզմի լավ չինարարներ դառնալու համար։

Մարքսի և Ենդելսի գաղափարը պոլիտեխնիկ դաստիարակության մասին զարգացվում և Լենինի կողմից։ Կուս. ծրագրի մի շարք կետեր, վորոնք վերաբերում են գաղափարակության և դպրոցական խնդիրներին, մշակվում են Լենինի կողմից։ Կուսակցության ծրագիրը դաստիարակության, կրթության, դպրոցի մասին։

37. Լենինի կյանքի վերջին տարիները։

Յերկարատեղ, լարված, ծանր աշխատանքը քայքայում և լենինի առողջությունը. Լենինի հիվանդությունը. Լենինի զեկուցումը 1922 թ. 11-րդ կուս համագումարում։ Լենինի հիվանդության հետագա զարգացումը։ «Թուս. հեղափոխության չորս տարին և միջազգային հեղափոխության հեռանկարները»։ Լենինի վերջին յերաշթը Մոսկվայի խորհրդում։ Կյանքի վերջին որերը։ Լենինի մահը։

38. Լենինը վորպես հեղափոխական և վորպես մարդ։

Լենինի կյանքի գերագույն նպատակը՝ պայքար բանվոր դասակարգի ազատագրման և սոցիալիզմի հաղթանակի համար։ Լենինի պողպատյա կայունությունը և բարձր սկզբունքայնությունը։ Նրա սերտ կապը մասսաների հետ։ Լենինը, վորպես հրաշալի կազմակերպիչ։ Նրա անսահման նվիրվածությունը հեղափոխությանը։ Նրա անսպառ յեռանդը, հանճարեղ միտքը։ Նրա հոգատար վերաբերմունքը։ Նրա համեստությունը։

39. Լենինը վերականգնեց, զարգացրեց ու լրացրեց
Մարքս-Լենգելսի ուսմունքը.

Լենինը Մարքսի-Լենգելսի արժանի աշակերտ և փոխարինող: Լենինը մերկացնում ե Ա ինտերնացիոնալի դավաճանական դեմքը միջազգային բանվորության առաջ: Պայքարելով ամեն տեսակի ոպորտունիստների դեմ՝ Լենինը վերականգնում ու պաշտպանում եր Մարքսի-Լենգելսի հեղափոխական ուսմունքը: Լենինն ապրում և աշխատում ե նոր պայմաններում, կապիտալիզմի զարդացման բարձր աստիճանում: Նա զարդացնում ե Մարքսի ուսմունքը, հատկապես պրոլետարական հեղափոխության, պրոլետարիատի դիկտատուրայի մասին: Լենինը գիտականորեն ապացուցում ե, վոր բանվորների աղատագրման միակ ճանապարհը, դա պրոլետարիատի լիկտատուրան ե:

Պրոլետարիատի դիկտատուրայի ձևը՝ խորհուրդները: Բանվորների և գյուղացիների դաշինքի խնդիրը: Պրոլետարիատը դիկտատուրան կարող ե իրագործել միայն կոմկուսակցության զեկավարությամբ: Պրոլետարական կուսակցությունը կարող ե զեկավարել բանվոր դասակարգին և լայն մասսաներին, յերբ նա միասնական ե և ունի յերկաթյան դիսցիպլինա: Հոկտեմբերյան հեղափոխությունը հանդիսացավ Մարքսի-Լենինի հեղափոխական ուսմունքի ճշտության պատմական ըստուգումը:

III. ՍՏԱԼԻՆ

40. Լենինի պատգամները հուսալի ձեռքերում

Ընկ. Ստալինի յելույթը խորհուրդների համամիութենական 2-րդ համագումարում (1924թ. հունվարի 26) Լենինի և Լենինի պատգամների մասին.—

1. Բարձր բռնել և մաքուր պահել կուսակցության անդամի կոչումը:

2. Պահպանել կուսակցության միասնությունը:

3. Պահպանել և ամբացնել պրոլետարիատի դիկտուրան:

4. Բոլոր ռեժիմներով ամբացնել բանվորի և գյուղացու դաշինքը:

5. Հայաստարիմ մնալ Կոմունիստական ինտերնացիոնալի սկզբունքներին:

46. Ստալինը Լենինի մարտակից և լավագույն աշակերտը:

Ստալինի համառոտ կենսագրությունը: Ստալինի հեղափոխական գործունեյությունը 1897 թ. նրա աշխատանքը մարքսիստական խմբակներում և կապը կուսակցության ընդհատակյա կազմակերպության հետ: 1898 թ. Ստալինը ո.ս.դ. կուսակց. անդամ: Նրա արտաքսումը դպրոցից: 1900-1901 թ. գործադուլները Թիֆլիսում, Ստալինի ընդհատակյա աշխատանքին անցնելը. նրա աշխատանքը Բաթումում. գործադուլներ Ռոտշիլդին և Մանթաչելի գործարաններում՝ Ստալինի ղեկավարությամբ. 1902 թ. քաղաքական ցույցը. Ստալինի ձերբակալվելը և բանտարկվելը. աքսոր արևելյան Սիրիո: Յերկրորդ կուս. համագումարում բոլշևիկների և մենշևիկների միջև ծագած տարածայնություններից հետո, Ստալինը բոլշևիկների բանակում: Ստալինի մտերմությունը Լենինի հետ՝ նրա աքսորավայրում յեղած ժամանակվանից: Ստալինի փախուստն աքսորից դեպի Կովկաս: Ստալինը 1905 թ. հեղափոխության նախորյակին Անդրկովկասում: Ստալինը պատգամավոր համառուսական բոլշևիկյան կոնֆերանսին Տամմերֆորսում (Ֆինլանդիա) Ստալինը 1906 և 1907 թ. պատգամավոր 4-րդ և 5-րդ համագումարներին: Ստալինի գործունեյությունը Բագվում:

Ստալինի ձերբակալումը 1908 թ. և աքսորն, աքսորից փախուստը և նորից կուսակցական աշխատանքը Բագվում:

Ստալինի ձերբակալվելը և աքսորը 1910 թ. փախուստ աքսորից և աշխատանքը Պետերբուրգում: 1912 թ. կրկին ձերբակալություն: Ստալինն արտառահմա-

նում: Պրագայի կոնֆերանսից հետո նա կուսակցության կենտրոնի անդամ (դրանից հետո նա անընդհատ կենտրոնի անդամ ե ընտրվում): 1912 թ. վերջին Պետերբուրգում. Ստալինը ղեկավարում ե « Հայա » և « Պրաւդ » որդանները: 1913 թ. իրկին ձերբակալվելը և աքսորը. աքսորում մինչև մինարդվարյան հեղափոխություն: 1917 թվից Ստալինը կենտրոնի քաղաքուրոյի անդամ:

Ստալինը միշտ լենինի և կուսակցության հետ ամեն տեսակ ոպորտունիզմի դեմ տարվող անհաշտ պայքարում: Ստալինի դերը Հոկտեմբերյան ապստամբության նախապատրաստման ու կազմակերպման գործում. Ստալինը ազգությունների կոմիսարիատի ժողկում. միաժանակ ԲԳԺ ժողկում մինչև 23 թ.: Ստալինի դերը քաղաքացիական պատերազմում: 1922 թ. կենտրոնի քարտուղար: Լենինի մահից հետո նա Համեր (բ)կ և կոմինտերնի անփոփոխ ղեկավար:

42. Ստալինը և Կարմիր բանակը.

Ստալինի դերը քաղաքացիական կռիվների ժամանակ. Ստալինը Յարիցինի ճակատում: Ռազմահեղափոխական կոմիտեյի ստեղծումը: Դիսցիպլինայի վերականգնումը բանակում. արտակարգ հանձնաժողովի ստեղծումը ուազմահեղափոխական կոմիտեյի կողմից: Կարմիր բանակի հաղթանակը Ստալինի ղեկավարությամբ:

1918 թ. ճգնաժամային դրությունը արևելյան ճակատում. Ստալինի և Զերժինսկու չնորհիվ 1919 թ. արևելյան ճակատը հարձակման ե անցնում: 1919 թ. դարձանը Յուդենիչը Պետերբուրգի մոտ: Յերեք շարաթվա ընթացքում՝ Ստալինի յեռանդուն և հմուտ ղեկավարության չնորհիվ Յուդենիչը յետ ե շպրտվում:

1919 թ. աշուն.— Դենիկինի բանակը մոտենում է Տուլյային. Ստալինը հարավային ճակատում: Առաջին դացման նոր ծրագիր՝ մշակված Ստալինի կողմից. հեծելազորի ստեղծվելը. Կարմիր բանակի հաջողությունները հարավային ճակատում: 1920 թ. Նովորոսիյսկի գր-

բավումը Կարմիր հեծելազորի կողմէց։ Ստալինը դեկա-
վարում և հարավարևելյան ճակատը լեհական բանակի
դեմ։

Ստալինն ամբացնում է Կարմիր բանակի ռազմու-
նակությունը քաղաքացիական կույսների ընթացքում և
նրա տեխնիկական զինվածությունը 1-ին հնգամյակի
հաջող կատարման չնորհիվ։

43. Ստալինը և ազգային հարցը.

Յարական Ռուսաստանը՝ վորպես ժողովրդների
բանու։ Ազգային ճնշում և շահագործում։

Մայրամասերը (Անդրկովկաս, Թուրքեստան, Ղը-
րիմ, Սիրիր և այլն) վորպես հումույթ արտադրող-
ներ՝ կենտրոնական արդյունաբերական Ռուսաստանի
համար։ Յարական Ռուսաստանի քաղաքականությունը
կասեցնելու արդյունաբերական զարգացումը ծայրամա-
սերում։ Զանազան ազգությունների աշխատավորու-
թյան իրավազրկությունը։ Մայրենի լեզվի հալածանքը
և արգելումը։ Ազգություններին իրար դեմ լարելը (հը-
րեյական ջարդեր, հայ-թուրքական կոտորածներ և
տյին)։ Հրեյանների և մյուս ժողովրդների հալածան-
քը։ Այդ բոլոր հալածանքներն ուղղված եյին միայն աշ-
խատավորության դեմ։ Վոչ ուսւ կալվածատերերի և
կապիտալիստների իրավունքներն ու արտոնություն-
ները։

Ազգային ճգնաժամերի, հալածանքների վերանա-
լը հոկտեմբերյան հեղափոխութան հետևանքով։ «Ռու-
սաստանի ժողովուրդների իրավունքների դեկարա-
ցիան»։ Լենինը, Ստալինը և մեր կուսակցությունն աղ-
զերի ազատագրման ու իրավահավասարության մտ-
սին։

Աղքային հարցի ուսումնասիրության խնդրում
Ստալինը ազգությունների կոմիսարիատի առաջին ժո-
ղովրդական կոմիսար։ Այդ կոմիսարիատի նշանակու-
թյունը կուսակցության և խորհրդային իշխանության
քաղաքականության կիրառման և Խորհրդային Միու-
թյան ստեղծման խնդրում։ Կուսակցության մտ-

վորոշումն ազգային անհավասարության վերացման, հետամնաց շրջանների ու ժողովուրդների տնտեսական ու կուլտուրական հետամնացությունը վերացնելու մասին:

Ազգային հանրապետությունների ինդուստրացումը: Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը, կուլտուրական շինարարությունն ազգային հանրապետություններում և շրջաններում:

44 Ստալինը և յերկրի ինդուստրացումը.

Յարական Ռուսաստանի տնտեսական հետամնացությունը. գերազանցորեն ագրարային յերկրի: Արդյունաբերությունը մեծ մասամբ գտնվում եր արտասահման-յան կապիտալիստների ձեռքին: Շնորհիվ հետամնաց տեխնիկայի Ռուսաստանը կախման մեջ եր ոտարյերկրյա կապիտալիստներից: Իմպերիալիստական և քաղաքացիական պատերազմներն ավելի քայքայեցին Ռուսաստանը: Լենինը մեռավ այն ժամանակ, յերբ մեր յերկրը դեռ վերականգնում եր իր քայքայված ժողովրդական տնտեսությունը: Յերկրի տնտեսության վերականգնումը 1926 թ: Մատալինը և յերկրի ինդուստրացման ու սոցիալիստական վերակառուցման խնդիրները: Սոցիալիստական վերակառուցման 1-ին հնդամյա պլանը 1928 թ.:

Առաջին հնդամյակի խնդիրները.—մեր յերկրը տեխնիկապես հետամնաց յերկրից դարձնել առաջավոր տեխնիկայի յերկիր, հետամնաց ագրարային յերկրից դարձնել խնդուստրիալ յերկիր. մանր ցրված գյուղատնտեսությունը վերածել խոշոր կոլեկտիվ սոցիալիստական դյուղատնտեսության և այդպիսով ապահովել սոցիալիզմի հաղթանակը վոչ միայն քաղաքում, այլ և գյուղում՝ դյուղատնտեսության մեջ:

Առաջին հնդամյակի արդյունքները՝ իր առաջ դըր ված հիմնական խնդիրների կատարումը: Մեր յերկրի տեխնիկական վերազինումը: Արտադրության միջոցների, հաստոցներ և մեքենաներ արտադրող հսկաների

կառուցմամ, տրակտորային և ավտոմոբիլային արդյունաբերության զարգացում։ Գյուղատնտեսական մեքենաշինարարության զարգացում։ Ավիացոն արդյունաբերություն։ Ելեկտրոֆիկացիա և ելեկտրո արդյունաբերություն։ Նավթի արդյունաբերություն։ Ածուխի և սև մետաղի արդյունաբերություն։ Թեթև արդյունաբերության աճը։ Բանվորների ու աշխատավորության նյութական կուլտուրական մակարդակի աճը։

Յերկրորդ հնգամյակի հիմնական խնդիրները. անդասակարգ սոցիալիստական հասարակարգի կառուցումը։ Յերկրորդ հնգամյակի առաջին տարվա խնդիրները. արտադրության յուրացումը. աշխատանքի արտադրողականության բարձրացումը, արտադրանքի վորակի բարձրացումը։

Յերկրի սոցիալիստական վերակառուցումը՝ դասակարգային սրված պայքարի պայմաններում։ Կապիտալիստական տարրերի ճգումների արձագանքները մեր կուսակցության շարքերում. աջ և «ձախ» ոպորտունիստները. հակահեղափոխական տրոցկիզմը։ Ընկ. Ստալինի ղեկավարությամբ կուսակցության պայքարը դրանց դեմ։

45. Ստալինը և գյուղատնտեսության կոլեկտիվացումը.

Սոցիալիզմ կառուցելու համար գյուղատնտեսության վերակառուցման անհրաժեշտությունը։ Խոչոր սոցիալիստական արդյունաբերության և մանր սեփականատիրական գյուղատնտեսության միատեղ յերկարատե գոյության անհնարինությունը։ Կուսակցության ճիշտ քաղաքականությունը գյուղացիության հանդեպ, ինդուստրացման հաջողությունները, կուսակցության անհաշտ պայքարը կուլակների դեմ նախապատրաստեցին աշխատավոր գյուղացիության դարձը դեպի սոցիալիզմ։ Բանվոր դասակարգի և կուսակցության ողնու-

թյունը գյուղին՝ վերակառուցելու գործում :
Կոլեկտիվ տնտեսության հիմնական ձևը ներկա ետա-
պում՝ գյուղատնտեսական արտելը : Գյուղատնտեսական
արտելում կոլտնտեսականի ոժանդակ անհատական
տնտեսությունը : Գյուղատնտեսության սոցիալիստական
վերակառուցումը տեղի յե ունենում դասակարգային ան-
հաշտ պայքարի պայմաններում :

Հեղափոխական տրոցկիստների տեսակետը գյու-
ղացիության նկատմամբ .— գյուղացիությունն անըն-
դունակ ե մասնակցելու սոցիալիստական շինարարու-
թյան : Տրոցկիստները դեմ են կուլակության, վորպետ-
դասակարգի վերացման : Կուսակցությունը Ստալինի
առաջնորդությամբ, չախջախեց տրոցկիստներին և պայ-
քարում ե տրոցկիստական բոլոր մնացորդների դեմ :
Աջ ոպորտունիստների տեսակետը կոլեկտիվացման մա-
սին . կոլեկտիվ և խորհրդային տնտեսությունները զար-
գացնելու փոխարեն զարգացնել անհատական տնտեսու-
թյունները : Թույլ տալ կուլակին զարգանալու, ընդու-
նել նրան կոլլսողի մեջ :

«Ձախ»-երը և նրանց քաղաքականությունը կոլեկ-
տիվացման ինդքում : «Ձախ»վարչարությունն կո-
լեկտիվացման արտելային ձեից թռչել կոմունային :
Գյուղացիների վողջ տնտեսության համայնացման ա-
ռաջարկ . ընկ . Ստալինի և կոմկուսակցության անհաշտ
պայքարը թե՛ աջ և թե՛ «ձախ» ոպորտունիստների
դեմ :

Կոլտնտ շինարարության ասպարիզում կոլտնտային
կարգերի հաղթանակ : Կոլեկտիվ տնտեսությունը դարձել
ե սոց. շինարարության ամուր հենարան : Կոլտնտ շարժ-
մանն առաջ դրվող նոր խնդիրները . կոլտնտեսություն-
ները դարձնել բոլեկիլյան, կոլտնտեսականներին՝ ու-
նելիոր . այդ խնդիրների զդալի չափով լուծումը 1933 թ.
րնթացքում : Կոլտնտեսությունների հաջողությունները
1933 թ. դրա պատճառները :

Դասակարգային պայքարի նոր ձևերը կոլեկտիվ
շինարարության մեջ : Ստալինի նախաձեռնությամբ
ՄՏԿ և խորհրդնտեսություններում քաղ-բաժիններ ըս-
տեղծելը . դրա նշանակությունը և արդյունքները :

Աշխատավորությանն ավելի հեշտ շահագործելու համար ցարական իշխանությունը նրան պահում եր տղի տության ու խավարի մնջ: Ամեն մի 100 բնակչին 77 անդրադեռ եր ընկնում: Դպրոցների վրա ծախսվում երին չնչին կոպեկներ:

Անդրադիտության վերացման քաղաքական նշանանկության մասին: Կոմ. կուս. Ստալինի գլխավորությամբ պայքարում և անդրադիտության և անկուլտուրականության դեմ: Տասնհինգ տարվա ընթացքում մեզ մոտ անդրադիտությունը հիմնականում վերացված ե: 16-րդ համագլ. վորոշումները պարտադիր ուսման մասին: Կուսակցության 1931 թ. սեպտեմբերյան վորոշումը 7-ամյա կրթության մասին: Կուսակցության՝ 1932 թ. ողոստոսի 25-ի վորոշ. 8-րդ խմբի վերաբերյալ, վորակես 10-ամյա պոլիտեխնիկ դպրոց ստեղծելու առաջին քայլ: Մեր հաջողությունները պարտուսի բնագավառում և սեպտեմբերի 5-ի ու ողոստոսի 25-ի վորոշումները և դպրոցի արմատական թերության վերացման ու վորակի բարձրացման խնդիրները:

Սոցիալիստական ինքուստրիայի և գյուղատնտեսության համար նոր կաղըբեր ստեղծելու խնդիրը. բարձրագույն դպրոցների ցանցի լայնացում և պրոլետարական ու կոլլոզային յերիտասարդության ընդդրկումը: Կուսակցության և խորհրդային իշխանության ձեռնարկումները կաղըբերի պատրաստման գործում:

Մեր յերկրի աշխատավորության կուլտուրական հոկայական աճը:

Խորհրդային իշխանության հրատարակած գրքերի քանակն ավելի յե, քան Անդիայինը, Գերմանիայինը, և Ամերիկայինը միասին վերցրած. թերթերի քանակը 12 անգամ ավելի յե ցարական իշխանության որով յեղած թերթերի քանակից: Գրադարանների, ընթերցարանների, ակումբների թվի աճումը: Հետամնաց խավար յերկիր դառնում և առաջավոր կուլտուրական յերկիր:

47. Ստալինը—կոմկուսակցության և կոմինտերնի
առաջնորդ։

Կոմկուսակցությունը Ստալինի ղեկավարությամբ
պայքարում ե իրագործելու Մարքս Լենինյան պատ-
գամները։ Լենինը մեզ սովորեցնում եր, վոր պրոլետա-
րիատի դիկտատուրայի ամրությունը կապված ե բան-
վոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության դա-
շինքի հետ։ Բարձր պահելով կուս անդամի կոչումը և
կուս շարքերի միամնությունը, կուսակցությունն ան-
շեղորեն իրագործել ե Լենինի պատգամները։

Լենինի մահվանից հետո, կուս ղեկավարությունն
ստանձնել ե Լենինի լավագույն աշակերտ և զինակից
Ստալինը։ Ստալինը Լենինի հետ միասին աշխատել և
պայքարել ե կուս։ Համար։ Ստալինի դերը, վորպես
լավագույն կազմակերպիչի և կուս շինարարի, հայտ-
նի յե դեռ այն ժամանակվանից, յերբ Լենինի ղեկավա-
րությամբ դրվում ելին կուս առաջին հիմնաքարերը և
կազմակերպվում առաջին խմբակները։ Ցարական կա-
ռավարության դաժան պայմաններում Ստալինը անո-
դոք պայքար եր մղում կուսակցության շարքերի ամ-
րացման և հեղափոխական պրոֆեսիոնալ կադրերի ըս-
տեղման համար։ «Զախերի» և աջերի փորձերը՝ խախ-
տել կուսակցության միասնությունը և նրա յերկաթե
կարգադրահությունը, վորոնց մերկացումը և ջախջա-
խումը կատարեց կուսակցությունն Ստալինի անմիջա-
կան ղեկավարությամբ։ Սոցիալիզմի կառուցման առ-
պարենում կուսակցության ունեցած հսկայական հաջո-
ղություններն իրականում ապացուցում ե Լենինյան ուս-
մունքի ճիշտ լինելը և նրա ճիշտ իրագործումը Ստալինի
ղեկավարությամբ։ Կուսակցության հաջողություններն
ամրող աշխարհում՝ մորթիլիզացիայի յենթարկել կոմ։
կուս ուժերը, պրոլետարական հեղափոխության հա-
մար, բանվոր դասակարգի դիկտատուրան՝ հաստատելու
գործում։ Ստալինը համաշխարհային պրոլետարիատի
առաջնորդն ե, վորքան նա սիրվում ե պրոլետարիատի
կողմից, այնքան ատվում ե բուրժուազիայի և հակահե-
ղափոխության կողմից։

Կոմինտերնի ծրագրի մշակումը և նրա իրազործումը կատարվում է ընկ. Ստալինի ղեկավարությամբ: Կոմինտերնը համաշխարհային հեղափոխության չուարն է, Ստալինը համաշխարհային հեղափոխության առաջնորդը:

ՎԵՐՈՌՈՐԴ ԽՈՒՄԲ

Ա. ՅԵՐԿՈՒ ԱՇԽԱՐՀ - ՅԵՐԿՈՒ ՍԻՍԵԽ

I. ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

1. Արտադրության միջոցների մասնավոր սեփականությանը կապիտալիզմի հիմքն է:

Կապիտալիզմի սիստեմի հիմքը, արտադրության միջոցների մասնավոր սեփականությունն է: Կապիտալիստական տնտեսությունը տարերային տնտեսությունն է: Կապիտալիզմի պայմաններում ապրանք և հանդիսանում նաև բանվորական ուժը: Բանվորը կապիտալիստական սիստեմում հանդիսանում է վարձու ստրուկ, վորն իր աշխատանքով ստեղծում է հասարակության վողջ հարստությունը:

2. Շահագործումը բուրժուազիայի հզորության աղբյուրն է.

Արտադրության միջոցների մասնավոր սեփականությունը կապիտալիստների շահույթի հիմքն է: Հավելյալ արժեք, վորպես բանվորների աշխատանքի չվարձատված մաս, վորը յուրացվում է կապիտալիստի կողմից և հանդիսանում է կապիտալիստական շահագործման աղբյուր:

3. Բուրժուազիան և պրոլետարիատը կապիտալիստական հասարակության հիմնական դասակարգերն են:

Ինչ է դասակարգը. Լենինի սահմանումը: Կապիտալիստական հասարակության յերկու հիմնական դասակարգերը՝ կապիտալիստներ և բանվորներ: Կապիտալիստները՝ արտադրության միջոցների տեր, իշխող, շահագործող դասակարգ, բանվորները,՝ ար-

տաղբության միջոցներից զուրկ — չահագործվող դասակարգ:

4. Կապիտալիստական հասարակության հիմնական հակառակությունը:

Կապիտալիստական հասարակության հիմնական հակառակությունը, — արտադրության հասարակական բնույթը և արտադրանքի յուրացման մասնավոր բնույթը:

5. Մրցություն և արտադրության անարխիա:

Հիմնական հակառակություններից բղխող մյուս հակառակությունները: Կապիտալիստական միջնադարությունը: Արտադրության միջոցների մասնավոր սեփականության և մրցության արդյունքը, — արտադրության անծրագրային անարխիկ բնույթը:

6. Կապիտալիզմի պայմաններում մի քեվեռում հարստության կուտակումը, մյուսում՝ աղքատություն:

Բանվորների ավելի ու ավելի ուժեղ չահագործում: Տեխնիկայի կատարելագործում, արտադրության կապիտալիստական ռացիոնալիզացիա և գործազրկության յերկարացում: Այս բոլորի արդյունքը, — մի ծայրում աճում, աշխատավարձի իջեցում, բանվորական որվահարստության կուտակում, մյուս ծայրում՝ բանվորության ու աշխատավորության աղքատության ու թշվառության կարգացում: Դասակարգային հակառակությունների որում:

7. Ճգնաժամերի անխուսափելիությունը կապիտալիզմի պայմաններում: Անարխիկ արտադրություն, ապրանքների գերարտադրություն, ճգնաժամեր: Մի կողմից տպրանքներով լի պահեստներ, մյուս կողմից քաղցած ու մերկ մասսաներ, վորոնք գնելու հնարավորություն չունեն: Արտադրության կրծատում, գործարանների փակում, բանվորների կրծատում: Այդպիսի ճգնաժամերի կրկնությունը կապիտալիստական յերկրներում մոտավորապես 12, 10, 8 տարին մեկ անգամ: Կապիտա-

լիստական ճգնաժամերը վորպես արտահայտություն
կապիտալիզմի հիմնական հակասության՝ արտադրու-
թյան հասարակական բնույթի և մասնավոր յուրացման:

II. ԽՄՊԵՐԻԱԼԻԶՄԸ ՎՈՐՊԵՍ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՎԵՐՁԻՆ ԱՍՏԻՃԱՆԸ

8. Արտադրության համակենտրոնացումը և կենտ-
րոնացումը: Մոնոպոլիաներ:

Կապիտալիստների միությունները սինդիկատնե-
րում, տրեստներում: Առանձին կապիտալիստների ազատ
մրցության փոխարինումը մոնոպոլիաներով, վորոնք
սակայն չեն վերացնում մրցությունը: Մոնոպոլիաների
գերիշխանության շրջանը լենինն անվանել ե իմպերիա-
լիզմի շրջան:

9. Բանկեր ֆինանսական կապիտալ: Բանկերը վոր-
պես միջնորդներ առանձին կապիտալիստների միջև:
Բանկերի խոշոր գերն իմպերիալիզմի շրջանում:

Խոշոր բանկերը հետզհետե դառնում են արդյունա-
րերական ձեռնարկությունների տերերը: Բանկային և
արդյունարերական կապիտալների միաձուլումը՝ Փի-
նանսական կապիտալ: Իմպերիալիզմը Փինանսական կա-
պիտալի գերիշխանության դարշնանն ե:

10. Կապիտալի արտահանումն. ավելի հետամնաց
յերկրները՝ զաղութները և կիսազաղութները՝ ավելի
մեծ շահույթ ստանալու համար: Կապիտալի արտահա-
նումն իմպերիալիզմի կարևոր հատկանիշներից ե:

11. Աշխարհի քաժանումը և պայքար նրա վերաբա-
ժանման համար: 20-րդ դարի սկզբներին վողջ աշխարհն
արդեն բաժանված եր խոշոր կապիտալիստական յերկր-
ների միջև: Գաղղութների հետագա գրավումը հնարավոր
ե միայն արդեն բաժանված աշխարհի վերաբաժանման
միջոցով: Իմպերիալիստական յերկրների միջև այդ վե-
րաբաժանման համար մղվող պայքարի անխուսակիելիու-
թյունը: 1914–18 թ. իմպերիալիստական պատերազմը
վորսես հետեւանք այդ պայքարի:

12. Խմբերիալիզմը, վորպես «նեխվող», «մեռնող»
կապիտալիզմ, վորպես սոցիալիստական հեղափոխու-

թյան հախորյակ։ Կապիտալիզմի նեխումը և քայքայումը։ Մոնոպոլիան վորպես տեխնիկայի հետագա զարգացման արդելակ։ Կապիտալիստների կտրվելը արտադրության դեկավարությունից։ «Մանայեներ»։ Ֆինանսական կապիտալիզմի զարգացում և պարագիտական պետություններ։ Կապիտալիզմը, վորպես արդելակ հասարակության հետագա զարգացման։ Նրա կործանման և ուրիշ հասարակարգով փոխարինվելու անխուսափելիությունն ու անհրաժեշտությունը։ Կապիտալիզմը կարող է կործանել բանվոր դասակարգը՝ պրոլետարական հեղափոխության միջոցով։

III. ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՍԻՍՏԵՄԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՃԳՆԱԺԱՄԸ ՅԵՎ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ.

13. Կապիտալիզմի ընդհանուր նգնաժամը։ 1914-18 թ. իմպերիալիստական պատերազմը ցնցեց համաշխարհային կապիտալիզմի վողջ սիստեմը և սկիզբ դրեց վողջ կապիտալիստական սիստեմի ընդհանուր ճգնաժամին։ Պրոլետարական հեղափոխության հաղթանակը ԽՍՀՄ-ում և յերկրագնդի բաժանումը յերկու աշխարհի-յերկու սիստեմի։ Հեղափոխական աղատագրական չարժումների ուժեղացումը գաղութներում։ Արտադրության կրծատում և գործազրկության աճումը կապիտալիստական յերկրներում։ Բանվոր դասակարգի դրության վատթարացման խորացում։ Դասակարգային պայքարի սրում։ Պրոլետարական հեղափոխության անխուսափելիություն։

14. Ժամանակակից եամաշխարհային տնտեսական նգնաժամ՝ կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի հիման վրա։ Ճգնաժամի սկիզբը 1929 թ. և բոլոր կապիտալիստական յերկրների ընդդրկումը։ Հակայական քանակությամբ աղբանակների կուտակում, արտադրության կրծատում, ձեռնարկությունների փակում։

15. Դործագրկություն։ Ճգնաժամի հետևանքով գործազրկության ուժեղ աճում կապիտալիստական յերկրներում (կապիտալիստական յերկրներում կամ մոտ 50 միլ. գործազրկություն) ընտանիքի անդամների հետ միա-

սին մոտ 200 միլ.) : Մի կողմից հսկայական քանակությամբ կուտակված ապրանքներ, մյուս կողմից միլիոնավոր քաղցածներ :

16. Միլիոնավոր գյուղացիների ժայֆայումը : Բանվորների գործազրկության ու աղքատության զուգընթաց՝ աշխատավոր գյուղացիության աղքատացումը : Արդյունաբերական ճգնաժամի և գործազրկության հետեւյանքով գյուղատնտեսական մթերքների գների անկում : Բատրակների և գյուղատնտեսական բանվորների շահագործման ուժեղացում : Մանր Փերմերների և գյուղացիների քայլքայում և պառապերիզացիա : Գաղութային յերկրներում գյուղացիության ավելի ծանր վիճակը և մասսայական մահացումը :

17. Կապիտալիստները վոչնչացնում են ապրանքներն այն ժամանակ, յերբ միլիոնավոր բանվորներ ու գյուղացիներ քաղցից մեռնում են : Ապրանքների վոչնչացում՝ գները բարձրացնելու նպատակով :

IV. ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՇԽԱՐՀ

18. Խորերդային տնտեսության առավելությունները կապիտալիստականի հանդեպ .

Խորհրդային տնտեսության հատկանիշները . 1) կապիտալիստների փոխարեն իշխանությունը բանվոր դասակարգի ձեռքին, 2) արտադրության միջոցները բանվորների և աշխատավոր գյուղացիության ձեռքին, 3) արտադրության զարգացումը յենթարկված ե վոչ թե մրցակցության ու կապիտալիստական շահույթի սկզբունքին, այլ պահանջին զեկավարման և աշխատավոր մասսաների բարեկեցության բարձրացման սկզբունքին, 4) ժողովրդական յեկամուտի բաշխումը՝ աշխատավորության բարեկեցության բարձրացման և սոցիալիստական արտադրության ընդլայնման շահերից յելնելով, 5) դերարսուագրության, ճգնաժամի և գործազրկության բացառումը մեղ մոտ .) յերկրի տերը հանդիսանում ե բանվոր դասակարգը, վորն աշխատում է վոչ թե կապիտալիստների, այլ իր սեփական դասակարգի համար :

Տնտեսության կապիտալիստական սխմամի հատկանիշ-
ները: 1) իշխանությունը կապիտալիստների ձեռքին, 2)
արտադրության զարգացումը յենթարկված և շահութ
ստանալու սկզբունքին, 3) արտադրության միջոցները
շահագործողների ձեռքին, 4) նույն սկզբունքին և յեն-
թարկված ժողովրդական յեկամուտի բաշխումը, 5) կա-
պիտալիստական ճգնաժամեր, 6) բանվոր դասակարգը
վորպես շահագործվող դասակարգ:

19. Նրանց մոտ գործարանները կանգ են առել, մեզ
մոտ ստեղծվում են նոր գիգանտ գործարաններ: Կապի-
տալիստական յերկրների չտեսնված ճգնաժամը. մեր սո-
ցիստական տնտեսության աննախընթաց վերելքը:
Հնդամյակի կատարումը 4 տարում: Մեր խոշոր նվա-
ճումներն արդյունաբերության բնագավառում (ու մե-
տաղաձուլում, տրակտորային, ավտոմոբիլային ար-
դյունաբերություն, գյուղատնտեսական մեքենաշինու-
թյուն, ելեկտրիֆիկացիա, նավթային, քարածխային
արդյունաբերություն և այլն, թեթև արդյունաբերու-
թյուն): Այս բոլորի հետեւանքով կապիտալիստական
տարրերի վերջնական դուրս մղումն արդյունաբերու-
թյունից: Մեր յերկիրը ագրարային յերկրից դարձել է
ինդուստրիալ:

20. Նոր՝ կոլտնտեսական կարգերի հաղթանակը.
Կապիտալիստական յերկրների գյուղատնտեսական
ճգնաժամը: Մեզ մոտ սոցիստական գյուղատնտեսու-
թյան բուռն աճը: Գլխավոր գյուղատնտեսական չքննի-
ներում գյուղատնտեսության կոլեկտիվացումը հիմնա-
կանում ավարտված: Գյուղացիության 60% ից ավելին
և ցանքսերի տարածության 80% կոլեկտիվացած: Գյու-
ղատնտեսության զինվածությունը տրակտորներով,
իոմբայններով և այլ գյուղատնտես։ մեքենաներով:
ՄՏԿ: Համատարած կոլեկտիվացման հիման վրա կու-
րակության, վորպես դասակարգի, վերացումը, կոլ-
տրնտեսությունը սոց. շինարարության ամուր հենարան:
ԽՍՀՄ մանր գյուղացիական տնտեսության յերկրից
դարձել ե աշխարհի ամենախոշոր գյուղատնտեսության
յերկիրը: Խոշոր գյուղատնտեսության առավելություն-

Ները կապիտալիստականի և մանր սեփականատիրականի հանդեպ:

21. ԽՍՀՄ-ի աշխատավորության նյութական-կենցաղային գրության բարելավումը. Գործազրկության վերացումը: 7 ժամյա (վորոշ արտադրություններում 6) բանվորական որ: Աշխատավարձի բարձրացում: Սոցիալական ապահովագրություն, աշխատանքի պաշտպանություն, կանանց և անչափահասների աշխատանքի հատուկ պաշտպանություն: Գյուղացիության դրության բարելավում. շահագործման վերացումը գյուղում. բոլոր կոլտնտեսականներին ունենոր դարձնելու խնդիրը: Բնակարանային շինարարություն: Առողջապահություն, կուլտուրական շինարարություն:

V. ՄԵՆՔ ՅԵՎ ՆՐԱՆՔ

22. Յերկու հանրագումար: Նրանց մոտ տնտեսական ճգնաժամ, մեզ մոտ տնտեսական վերելք: Նրանց մոտ աշխատավորների՝ նյութական դրության վատթարացում, աշխատավարձի իջեցում, գործազրկություն, մեզ մոտ նյութական դրության բարելավում, աշխատավարձի բարձրացում, գործազրկության վերացում: Նրանց մոտ դործազուլների աճ և միլիոնավոր բանվորական որերի կորուստ, մեզ մոտ գործազուլների բացակայություն, աշխատանքային խանդավառության վերելք: Նրանց մոտ ներքին դրության սրում, մեզ մոտ ներքին դրության ամրացում: Նրանց մոտ ազգային հարցի սրում, մեզ մոտ բոլոր աղքությունների յեղբայրական դաշինքի ամրացում և կուռ համախմբում Խորհրդային իշխանության ու սոցիալիզմի կառուցման շուրջը: Այս բոլորի պատճառը յերկու տնտեսական սիստեմների տարրերությունն ե, կապիտալիստական սիստեմի սնանկացումը, խորհրդային սիստեմի առավելությունները:

23. Կապիտալիստների վորոնած յելքը նգնաժամից Յելքի վորոնում ի հաշիվ բանվորների և գյուղացիների: Բանվոր դասակարգի նյութական դրության ավելի վատթարացում: Այս միջոցի սնանկությունը: Նոր գաղութ-

ներ զավթելու և նոր իմպերիալիստական պատերազմի վտանգը: Կապիտալիստական յերկրների սպառազինում-ները և պատերազմի նախապատրաստումը: Պատերազմի նախապատրաստում ամենից առաջ ԽՍՀՄ-ի դեմ: Իմ-պերիալիստների պրովոկացիոն փորձերը ԽՍՀՄ-ը պատերազմի մեջ քաշելու: Ինտերվենցիայի վտանգը: Մեր խաղաղասիրական քաղաքականությունը և միաժամանակ յերկրի պաշտպանության ամրացումը:

24. Ֆաշիզմ և սոցիալ-ֆաշիզմ: Ճգնաժամից դուրս դալու փորձերը և կապիտալիստական պետությունների ֆաշիզացիան. կապիտալի բացահայտ դիկտոտուրան. բացահայտ բռնության տեռորը բանվորների և աշխատավորների նկատմամբ: Ֆաշիստների դեմագոգիկ, խաբերայական քաղաքականությունը: Ֆաշիզմի ամրացումը վորպես ապացույց հակասությունների ու դասակարգային պայքարի ուժեղացման ու սրման: Սոցիալ ֆաշիզմը բուրժուազիայի դլմավոր սոցիալական կարգերը պահպանելու համար: Կապիտալիզմի խաղաղ ներաճման տեսությունը սոցիալիզմի: Սոցիալ ֆաշիստների միաձուլումը բուրժուական կառավարությունների ապարատի հետ: Սոցիալ-ֆաշիստները կոմմնակից ԽՍՀՄ-ի ինտերվենցիային: Սոցիալ ֆաշիստները բանվոր դասակարգի և կոմունիստական կուսակցության դլմավոր թշնամի:

25. Վողջ աշխարհի պրոլետարիատի պայքարը նցնաժամի հեղափոխական յելքի համար: Հեղափոխական շարժման վերելքը և սըրոլետարիատի հեղափոխական ոլայքարի ծավալումը կոմունիստական կուսակցությունների դեկալարությամբ (Զինաստան, Իսպանիա, Գերմանիա, ՀԱՄՆ և այլն): Բանվորական շարժման հետ միասին դյուզացիների հեղափոխական շարժման ուժեղացում:

Մի շարք յերկրներում պրոլետարական հեղափոխությունը մոտադա խնդիր է: Վողջ աշխարհի աշխատավորության համակրանքը ԽՍՀՄ-ի կողմը: ԽՍՀՄ-ի սոցիալիստական շինարարության հաջողությունների նշանա-

Կությունը միջազգային հեղափոխական շարժման համար:

ԽՍՀՄ-ի պաշտոպանության և Կարմիր բանակի ամրացման խնդիրը:

Բ. ՄԵՐ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԿՈՄՈՒՆԻԶՄՆ Ե

VI. ԻՆՉ ԲԱՆ Ե ԿՈՄՈՒՆԻԶՄԸ

26. Հասարաւկություն՝ առանց մասնավոր սեփականության, առանց դասակարգերի, առանց շահագործման: Կոմունիստական հասարակության մեջ կվերանան արտադրության միջոցների մասնավոր սեփականությունը, հասարակության բաժանումը՝ դասակարգերի, մարդու շահագործումը մարդու կողմից. կվերանան կապիտալիստ. հասարակության հակասությունները, արտադրության անարիխիոն, ճգնաժամերը: Պետության մահացում: Տեխնիկայի աննախընթաց զարգացում, գիտության զարգացում: Արտադրության պլանային կաղմանկերպում:

27. Կոմունիստական հասարակության կուլտուրան: Աշխատանքի արտադրողականության աննախընթաց բարձրացումը կոմունիստական հասարակության մեջ: Աշխատանքը վորպես ազատ ստեղծագործական գործունեյության պահանջ: Մարդկանց բազմակողմանի, պոլիտեխնիկ զարգացում: մտավոր և ֆիզիկական աշխատանքի միջև անջրապետի վերացում: Գիտության և կուլտուրայի չտեսանված զարգացում: Շահագործման հասարակությունից բոլիսող հանցագործությունների վերացում: Քաղաքի և գյուղի միջև անջրապետի վերացում:

28. Ցուրաքանչյուրից ըստ ընդունակության, յուրաքանչյուրին ըստ պահանջի: Կոմունիստական հասարակության վոչ ապրանքային բնույթը: Մթերքների բաշխումն ըստ յուրաքանչյուրի պահանջի. դրա հնարակորությունը. տեխնիկայի և աշխատանքի արտադրողականության չտեսանված զարգացումը, բոլորի պահանջները. լրիվ բավարարելու հնարավորությունը:

VII. ԻՆՉ Ե ՍՈՑԻԱԼԻԶՄԸ

29. Կոմունիզմի ստորին առտիմանը, —դա սոցիալիզմի շրջանն է։ Սոցիալիզմի ժամանակ արտադրության միջոցների մասնավոր սեփականության վերացում։ ղասակարգերի և ղասակարգային տարբերությունների վոչնչացնում։ միասնական պլանային տնտեսության կազմակերպում։ Սոցիալիզմը կոմունիզմից տարբերվում է արտադրողական ուժերի զարգացման աստիճանով և մեթերքները՝ աշխատան ձևով։ սոցիալիզմի ժամանակ յուրաքանչյուրն ստանում է ըստ իր աշխատանքի։ Սոցիալիզմի ժամանակ դեռ պահպանման և պետական իշխանությունը։

VIII. ՊԱՅՔԱՐ ԱՆԴԱՍԱԿԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՍՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

30. ԽՍՀՄ քեակոխսել է սոցիալիզմի շրջանը։ Արտադրության միջոցների մասնավոր սեփականության վերացում արդյունաբերության մեջ և գյուղատնտեսության մնջող մասի մեջ։ «Ով-ում»—ի խնդրի վերջնական լուծումը հոգուա սոցիալիզմի։ Շահագործման վերացումը մեր սոցիալիստական ձեռնարկություններում։ Պլանային տնտեսություն, ճղնաժամերի վերացում։ Աշխատանքի արտադրողականության չտեսնված աճ, գիտության, տեխնիկայի զարգացում։ Հիմնականում գյուղատնտեսության կոլեկտիվացման ավարտում։ 2-րդ հնդամյակում անդասակարգ սոցիալիստական հասարակություն կառուցելու խնդիրը։ Այս բոլորը կատարվում են ղասակարգային սրված պայքարի պայմաններում։

31. Սոցիալիզմի ուղին անցնում է պրոլետարիատիկի կիկուատուրայի վրայով։ Առանց պրոլետարական հեղափության ու պրոլետարիատի դեկտատուրայի անհնարինություն կառաջանալու աղիքիայի տապալումը, նրա դիմադրության հաղթահարումը և նոր հասարակության կառուցումը։

**Գ. ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՆ, — ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ
ՍՈՑԻԱԼԻԶՄԻՆ ԱՆՑՆԵԼՈՒ ԱՆՑՈՂԻԿ ԾՐՁԱՆ**

IX. ՈՒՍՄՈՒՆՔ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

32. Մարքս, Ենգելս, Լենին, Ստոլինը պետության մասին: Պետության առաջացման պատմական պայմանները: Նախնական անդասակարգ հասարակության մեջ պետական բացակայությունը: Պետության եյությունը և ֆունկցիաները: Պետության զանազան պատմական տիպերը (սարկատիրական, ֆեոդալական, բուրժուական): Անցողիկ շրջանի պետություն՝ պրոլետարիատի դիկտատուրա: Պրոլետարական պետության սկզբունքային տարրերությունը մինչ այդ գոյություն ունեցող պետություններից:

X. ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

33. Սոցիալ-Փաշխատներն իշխանության գլուխ: Սոցիալ Փաշխատների՝ առանց պրոլետարական հեղափոխության ու պրոլետարիատի դիկտատուրայի սոցիալիզմի կառուցելու անսակետը վորպես բանվորներին խարելու և բուրժուական իրավակարգը պահպանելու միջոց: Այդ են ցույց տալիս և այն բոլոր գեպքերը, յերբ սոցիալ Փաշխատներն իրենք են կանգնում բուրժուական կառավարությունների գլուխը:

34. Կապիտալիստական յերկրներում դեմքրատական ազւտությունները մասսաներին խարելու գործիք են հանդիսանաւմ: Բուրժուազիայի խարերայությունը վերդասակարգային պետության, դեմոկրատիայի մասին: Կապիտալիստական յերկրներում դոյություն ունի միայն բուրժուազիայի դիկտատուրան: այլտեղ աշխատավորության համար իրական հավասարության ու ազատության անհնարինությունը: Բուրժուական «ազատությունների» ֆիկտիվ լինելն աշխատավորության համար:

35. Բուրժուազիայի դիկտատուրայի բացահայտձեր՝ Փաշիզմը: Կապիտալիստական հակասությունների և դասսակարգային պայքարի սրման հետ «դեմոկրատիայի» փոխարինումը բուրժուազիայի բացահայտ,

Փաշիստական դիկտատուրայով։ Առց. Փաշիստների ու ժանդակությունը Փաշիզմի առաջացմանը ու ամբողնդմանը։

ХІ. ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

36. Պրոլետարիատի դիկտատուրան վերպես անցողիկ շրջանի պետություն։ Պրոլետարական հեղափոխության խնդիրն ե վոչ միայն իշխանության դրավումը բանվոր դասակարգի կողմից, այլ և պրոլետարիատի դիկտատուրա հաստատելով կոտրել շահագործող բուրժուատիքայի դիմադրությունը և ձեռնարկել անդասակարգ հասարակարգի կառուցման։

37. Պրոլետարիատի դիկտատուրայի յերեք հիմնական կողմերը. ա) շահագործողների և նրանց դիմադրության ճնշումը. յերկրի պաշտպանությունը. բ) դաշինք շահագործման աշխատավորական մասսայի հետ, նրանց դեկավարումը և ներդրավումը սոց. շինարարության դործին. դ) սոց. հասարակության կառուցում, դասակարգերի վերացում։ Այս բոլորի համար ամուր պետական ապարատի անհրաժեշտությունը։

38. Պրոլետարիատի դիկտատուրայի պետական ապարատը։ Հոկտեմբերյան հեղափոխության ժամանակ բանվոր դասակարգի կողմից առաջն հերթին ցարական իրուսաստանի պետական ապարատի վոչնչացումը և ի դեմս խորհուրդների՝ պրոլետարական պետություն ստեղծելը։ Հին պետական ապարատի փոխարեն իր պետական ապարատի և նրա տարրեր օրգանների ստեղծումը։ Բանկերի, խոշոր ձեռնարկությունների, յերկաթուղու, հողի ազգայնացում։ Կուլտուրական հիմնարկների անցումը պրոլետարական պետության ձեռքը։

39. Պրոլետարիատի դիկտատուրայի քարձրագույն սկզբունքը, դա զյուղացիության հետ դաշինքի պահպանումն է։ Բացի պրոլետարիատից նաև գյուղացիությունն ե շահագործված սոցիալիզմի կառուցմամբ, վորք միայն նրան կարող ե ազատել շահագործումից։ Բանվոր դասակարգի հեղեմոնիայի խնդիրը։ Բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի անհրաժեշտությունը (բան-

վոր դասակարգի զեկավարությամբ) սոցիալիզմի կառուցման համար: Բանվոր դասակարգի տարրեր վերաբերմունքը դեպի գյուղացիության տարրեր շերտերը (կուլակներ, միջակներ, չքավորներ): Գյուղացիության հետ զաշինքի և դեպի նրա տարրեր շերտերը պրոլետարիատի վերաբերմունքի խնդիրը հեղափոխության և ոռչությամբ:

40. Պայքար լենինյան ֆաղաքականության համար գյուղացիաւթյան հարցում: Կոլտնտեսական կարգերի հաղթանակը վորովես ապացույց գյուղացիության վերաբերմամբ ունեցած լենինյան քաղաքականության ճշուժյան: Տրոցիկոմը գյուղացիության խնդրում: Կուսակցության պայքարը գրա դեմ և հակահեղափոխական տրոցիկոմի ջախջախումը: «Ձախ» ուսուրագմիստների տեսակետները գյուղացիության նկատմամբ: Աջ ոպորտունիսաները և գյուղացիության հետ զաշինքի խնդիրը: Կուսակցության պայքարը գրանց դեմ և կուսակցության գլխավոր գծի հաղթանակը:

XII. ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԵՎՀ.

41. Խորիուրբները պետության նոր տիպ: Հոկտեմբերյան հեղտափոխության հետևանքով Խորհրդային իշխանության՝ պետական դիկտատուրայի սահմանում: Խորհրդային իշխանության եյությունը: Խորհրդային պահանագոր մասսաների ընտրական որդաններ:

42. Խորիրդային դեմոկրատիա: Խորհրդային իշխանությունը վորպես ամենալրիվ դեմոկրատիա, աշխատավորության, հասարակության ճնշող մեծամասնության դեմոկրատիա: Աշխատավորների համար յերկրի կառավարմանը մասնակցելու ամեն մի սահմանափակման վերացում: Կանանց և տղամարդկանց, բոլոր ազգությունների աշխատավորների կատարյալ իրավահավասարություն: Շահագործողների իրավազրկություն:

43. Ինչպես ե կառուցված խորիրդային պետությունը: Խորհրդային իշխանության ստորին բջիջը, —քաղխորհուրդ, գյուղխորհուրդ, խորհուրդների համագու-

և կուլտուրապես հետամնաց աղգություններին ցույց տրվող ոգնությունը՝ վերացնելու իրենց հետամնացությունը։ Նախկին հետամնաց շրջանների և աղգությունների տնտեսական և կուլտուրական վերելքը։

48. Պայքար կենինյան ազգային քաղաքականության համար։ Աղքային քաղաքականության յերկու կարգի թերում՝ մեծապետական շովինիզմ և տեղական նացիոնալիզմ։ Գլխավոր վտանդը՝ մեծապետական շովինիզմը։ Անողոք պայքար այդ յերկու թերումների դեմ։

XIV. ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՅԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՅԵՐԿՐՈՐԴ ՀՆԳԱՄՑԱԿՈՒՄ

49. Արդյունաբերություն։ Մեր նվաճումներն առաջին հնդամյակում։ Գոյություն ունեցող և նոր կառուցվող ձեռնարկությունների յուրացումը հանդիսանում է յերկրորդ հնդամյակի կարեվորագույն խնդիրը։ Աշխատանքի արտադրողականության բարձրացման և ինքնարժեքի իշեցման, արտադրանքի վորակի բարձրացման խնդիրները։ ԽՍՀՄ-ի տնտեսական կատարյալ անկախության ապահովումը կապիտալիստական յերկրներից։ Մեր ժողովրդական տնտեսության տեխնիկական վերակառուցման ավարտումը։ Այս բոլոր խնդիրների հաջող լուծման համար ընկ. Ստալինի պատմական ցուցումների կատարումը։ Սոցմրցման և հարվածայնության ծավալումը։ Բանվորների կուլտուր-կենցաղային սպառարկման բարելավումը։

50. Գյուղատնտեսություն։ Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման բնագավառում առաջին հնդամյակում ունեցած մեր նվաճումները։ Այժմ հիմնական խնդիրը, — զա կոլտնտեսությունների քաղաքական, կաղմակերպչական-տնտեսական ամրացումն է։ Դառակարգային թշնամու, կուլակի պայքարի նոր ձեռքը։ Կոլտնտեսություններն իրապես բոլշևիկյան դարձնելու խնդիրը։ Աշխատանքի կազմակերպումը, աշխատանքի դիսցիպլինան ամրացնելու միջոցառումները։ Բերքատվության բարձրացման պրոբլեմը և աղբոտեխնիկական միջոցառումներ։ Բոլոր կոլտնտեսականներին

մարները և նրանց Փունկցիաները։ Գործադիր կոմիտեներ։ Տեղական իշխանություններ։ Ինքնավար հանրապետություններ։ Խորհուրդների հանրապետական համագումարներ։ Կենտրոնական Գործադիր կոմիտեներ։ Կենտրոնական հանրապետություններ։ ԽՍՀՄ և նրա մեջ մտնող միութենական հանրապետություններ։ ԽՍՀՄ-ի
իշխանության բարձրագույն որդանը՝ Խորհուրդների համադումարը։ ԽՍՀՄ-ի կենտրոնակոմը բաղկացած ե Միութենական խորհրդից և Ազգությունների խորհրդից։ ԽՍՀՄ-ի ժողկոմիորհը։ Ժողովրդական կոմիսարիատներ՝ ա) միութենական, բ) միացյալ կամ դիրեկտիվ։

45. Կուսակցությունը և քանվոր դասակարգի մյուս կազմակերպությունները պրալետարիատի դիկտատուրայի սփառեմում։ Բանվոր դասակարգի կողմից իր դիկտատուրայի իրացումը մի շարք կազմակերպությունների՝ շարժիչ փոկերի միջոցով։ — Խորհուրդներ, պրոֆմիություն, կոոպերացիա, կոմսոմոլ և այլն. դրանցից յուրաքանչյուրի տեղը և դերը։ Կուսակցությունը բանվոր դասակարգի ավանդարդը, միացնում և ղեկավարում ե դրանց բոլորի աշխատանքը։

XIII. ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՅԻ ՑԵՐԿՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

46. Պրոլետարիատի դիկտատուրան վերջ և տվել ժողովուրդների անհավասարությանը։ Բուրժուական պետության և պրոլետարական պետության ազգային քաղաքականության սկզբունքային խոր տարրերությունը։ Միայն պրոլետարական դիկտատուրան կարող է վերջ տալ ժողովուրդների անհավասարության։ Ցարական Ռուսաստանի ազգային քաղաքականությունը և ազգային հարածանքները։ Հոկտեմբերյան հեղափոխությունը և այդ բոլորին վերջ տալը։

47. Խորհրդային իշխանությունը վոխել ե ազգային շրջանների դեմքը։ Վոչ միայն հավասարություն հայտարարել բոլոր ժողովրդների համար, այլ և իրապես հնարավորություններ ստեղծել այդպիսի՝ տնտեսական, կույտուրական հավասարության համար։ Տնտեսապես

ունեոր դարձնելու խնդիրը և դրա համար անհրաժեշտ
պայմանները։ Պրոլետարական պետության կողմից կու-
տընտեսություններին ցույց տված հսկայական ունու-
թյունը։ Պետության հանդեպ ունեցած պարտավորու-
թյունների ձչորիտ կատարումը կոլտնտեսությունների և
կոլտնտեսականների կողմից։ Հացամթերման նոր որեն-
քը, նրա եյությունը, տնտեսական-քաղաքական նշանա-
կությունը։ Կոլտնտեսությունների և ՄՏԿ պայմանա-
գրային պարտավորությունները։ Խորհանտեսություն-
ները և հացամթերման դժով նրանց պարտականու-
թյունները։ ՄՏԿ և խորհանտեսություններին կից քաղ-
աքաջինների կազմակերպումը։ սրանց դերը և նշանակու-
թյունը։

51. Պրոլետարիատի դիկտատուրայի ամրացման
համար։ Յերկրորդ հեգամյակում մեր առաջ դրված
խնդիրների իրականացման համար դասակարգային
թշնամու դեմ համառ պայքարի անհրաժեշտությունը։
Դասակարգային թշնամին ջախջախված ե., բայց չի
վոչնչացված։ Նրա պայքարի նոր ձևերը։ Կազմիտավիս-
տական մնացորդների դեմ պայքարելու համար պրոլե-
տարիատի դիկտատուրայի և նրա որդանների ամրացման
անհրաժեշտությունը։

Գ. ՀԱՅԱՍՏԻՈՒԹԵՆԱՎԱՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ (ԲՈԼՇԵՎԻԿ- ՆԵՐԻ) ԿՈԽԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՅԵԿ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԻՆՏԵՐՆԱՏԻՈՆԱԼ

XV. ՄԱՐՔՍԻ, ԵՆԳԵԼԻ, ԼԵՆԻՆԻ, ՍՏԱԼԻՆԻ ՈՒՍ- ՄՈՒՆՔԸ ԿՈԽԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

52. Կուսակցությունը քանվոր դասակարգի առաջա-
վոր օգկատն և։ Բանվոր դասակարգը վորպես կապիտա-
լիզմի ծնունդ և նրա գերեզմանափոր։ Իր ազատագրման
դորձը հաջող տանելու համար պրոլետարիատը ստեղ-
ծում և իր կուսակցությունը։ Կուսակցությունը վորպես
բանվոր դասակարգի գիտակից, առաջավոր շերտը, ա-
վանդարդը։ Բանվոր դասակարգի համար իր կուսակցու-
թյան անհրաժեշտությունը։

53. Կուսակցությունը բանվոր դասակարգի կազմակերպիչներին: Բուրժուազիայի դեմ պայքարելու համար բանվոր դասակարգի կազմակերպվածության անհրաժեշտությունը բանվոր դասակարգի կազմակերպվածության անհրաժեշտությունը պրոլետարիատի դիկտատուրայի, սոցիալիզմի կառուցման պայմաններում:

54. Կուսակցությունը պրոլետարիատի մարտական շտաբը, պրոլետարիատի պայքարը ղեկավարելու համար:

55. Կուսակցությունը դասակարգային կազմակերպության բարձրագույն ձև: Պրոլետարիատի մասսայական կազմակերպությունների բազմաթիվ ձևեր և դրանց անելիքները: Կուսակցության անհրաժեշտությունը դրանց բոլորի աշխատանքը կենտրոնացնելու և ղեկավարելու համար:

56. Կուսակցությունը պրոլետարիատի դիկտատուրայի գենեֆ: Կուսակցության անհրաժեշտությունը բանվոր դասակարգի կողմէց իշխանությունը գրավելու, այն իր ձեռքում պահելու, ամրացնելու և սոցիալիզմ կառուցելու համար:

57. Կուսակցության ինքնուրույնությունը և դասակարգային անհաջողությունը: Բանվորական կուսակցությունը պետք է լինի քաղաքականապես միանդամայն ինքնուրույն և դասակարգորեն անհաշտ դեպի բուրժուազիան:

58. Կուսակցության միասնականությունը: Պրոլետարիատի, վորակես դասակարգի, և նրա շահերի միասնությունը: Այդ դասակարգը կարող է ունենալ իրապես միայն մի հեղափոխական կուսակցություն-կոմունիստական կուսակցություն: Իրապես գաղափարական և կազմակերպչական միասնություն: Անողոք պայքար ամենաենակ թեքումների և ֆրակցիականության դեմ:

59. Ցերկարթյա կարգապահություն և ինքնառնադատություն: Միասնական գործողության, դիսցիպլինայի անհրաժեշտությունը: Գիտակցական դիսցիպլինա, կամավոր յենթարկում: Բոլշևիկյան ինքնաքննադատության անհրաժեշտությունը:

60. Ովքեր կարող են լինել կուսակցության անդամ։ Կուսակցության անդամ կարող են լինել միայն աշխատավորները։ Աշխատավորության տարրեր շերտերից կուսակցության մեջ ընդունելու պայմանները (բանվորներ, կոլտնտեսականներ, մենատնտես գյուղացիներ, ծառայողներ և այլն) և դրա նշանակությունը կուսակցության կազմի պրոլետարական խավի տեսակարար կչիուր պահպանելու և ուժեղացնելու համար։

61. Կուսակցության կազմակերպչական կառուցվածքը։ Կուսակցության կառուցվածքի հիմնական սկզբունքը։ Դնմոկրատական ցենտրալիզմը։ Կուսակցական կազմակերպության հիմքը հանդիսանում ե կուսակցական բջիջը։ Դրա կառուցման արտադրական սկզբունքը։ Բջիջի բյուրոն, քարտուղարը։ Դրանց Փունկցիաները։ Կուսանդամավճար։ Բոլոր կուսանդամների և կուսկազմակերպությունների համար պարտադիր խստագույն կուսակցական դիսցիպլինան։ Կուսակցության բարձրագույն մարմինը հանդիսանում ե Կուսակցության Համամիութենական Համագումարը։ Համամիութենական կուսակցական կոնֆերենցիա։ Համ կ(բ)կ կենտկոմի պլենումներ։ Քաղբյուրո, Կազմբյուրո, Քարտուղարություն։ Գլխավոր քարտուղար։ Առանձին հանրապետությունների կուսակցական կազմակերպությունները-ազգային կոմունիստական կուսակցություններ (Ովքայնայի, Վրաստանի, Հայաստանի և այլն)։ Այդ կազմակերպությունների կենտրոնական կոմիտեները։ Յերկրային, մարդային, շրջանային կուսակցական կազմակերպությունները նրանց կոմիտեները։ Այդ կոմիտեների բյուրոները և քարտուղարները։

XVI. ՊԱՅՔԱՐ ՑԵՐԿՈՒ ՃԱԿԱԾԻ ՎՐԱ

62. Տարաձայնությունների ադրյուրը կուսակցության մեջ։ Մեր կուսակցությունն աճել ու ամրացել երանվորական շարժման մեջ հանդես յեկող ամեն տեսակ բուրժուական, մանր-բուրժուական, ոպորտունիստական հոսանքների, թեքումների դեմ պայքարելու մեջ։ Այդ հոսանքների, թեքումների սոցիալական արմատները

բուրժուական յերկըներում և մեղ մոտ : Այդ հոսանքների և թեքումների դեմ հետեւողական անհաշտ մարքս-լենին յան պայքարի անհրաժեշտությունը :

63. Ինչպիսի բշնամիների դեմ պայքարելով և անելու ամրացել բոլշևիզմը : Պայքար մենշեների դեմ, աջ սպորտունիուսների դեմ : Կուսակցության յերկըորդ համագումարում բոլշևիկների անջատումը մենշեներից : Մենշեների դիմավոր տարածայնությունները բոլշևիկներից կուսակցության կառուցման և անդամության խնդրում, 1905 թ. հեղափոխության բնույթի և շարժող ուժերի մասին, 1905 թ. հեղափոխությունից հետո հեղափոխությունը վերջացած համարելը և անլեգալ կուսակցության անհրաժեշտության ժխտումը . Խմայերի հմայիալիստական պատերազմի ժամանակ մենշեներն իմպեր, պատերազմի պաշտպաններ : 1917 թ. փետրվարյան հեղափոխությունը . մենշեները բուրժուազիայի հետ ընդդեմ բանվորների կողմից իշխանությունը կրավելուն : Հոկտեմբերյան հեղափոխությունը և մենշեների պայքարը պրոլետարիատի դիկտատուրայի դեմ : Բոլշևիկների տեսական անհաշտ պայքարը մենշենիկների դեմ : Բանվորական շարժման մեջ բոլշևիզմի մյուս թշնամին, վորի դեմ պայքարել ու ամրացել երաշենիզմը, դա մանր բուրժուական հեղափոխականությունն է : Այս հոսանքի դիմավոր արտահայտիչները՝ այսպես կոչված «սոցիալիստ հեղափոխականները» : Պրոլետարիատի առաջատար հեղափոխական դերի ժըխտումը «Եսերների» կողմից : Անհատական տեռորի նըրանց ուսմունքը և քաղաքականությունը : Բոլշևիկների տեսական և համառ պայքարն «եսերների» դեմ, վորպես «ձախ» բուրժուական կուսակցության : Հեղափոխությանը և եսերները .— փետրվարյան հեղափոխությունից հետո եսերները բուրժուական կառավարության անդամներ : Գյուղացիական ապստամբությունների ճշնչում . իմպերիալիստական պատերազմի շարունակություն . հեղափոխական բանվորների, դյուզացիների, հեղափոխական կազմակերպությունների հալուծանք : Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո «եսերները» գենքը ձեռքբերին պայքարում են Խորհրդային իշխանությունը

թյան դեմ: «Եսերները» և ՍՀՄ-ի դեմ կազմակերպվող ինտերվենցիայի ակտիվ մասնակիցներ:

64. Պայքար տրոցկիզմի դեմ; Բոլշևիկների համառ պայքարը տրոցկիզմի դեմ: Տրոցկիստները վորպես մենչեւիկյան կուսակցության մի Փրակցիա, հիմնականում մենչեւիկյան հայացքներով: Տրոցկիստների ցենտրիզմը: Տրոցկու յերկարատև պայքարը Լենինի և բոլշեվիկների դեմ: 1903-4 թվ. Տրոցկին մենչեւիկների հետ բոլշեվիկների դեմ: 1905 թ. հեղափոխության ժամանակի ըստ «Ճախ» Փրազների տակ փաստորեն մենչեւիկյան հայացքների պաշտպանություն: Մեակցիայի տարիներին Տրոցկին մենչեւիկների հետ բոլշեվիկների դեմ: 1912 թ. ոգոսառոյան հակաբոլշեվիկյան բլոկի կազմակերպումը: Խմբերիալիստական պատերազմի ժամանակ նրա ըստ եյության մենչեւիկյան դիրքը: 1917 թ. հեղափոխության ալիքը նրան մզում ե գեպի բոլշեվիկյան կուսակցությունը, սակայն կուսակցության մեջ նա պահպանում ե մենչեւիկյան հայացքներ, վորոնք բացահայտ կերպով հանդես են գալիս 1923 թ.: 1926/27 թ. նա միացյալ ոպողիցայի առաջնորդ: Կուսակցության դեմ պայքարը Տրոցկուն հասցնում ե հակահեղափոխական բանակը: Տրոցկիզմը հակահեղափոխական բուրժուազիայի առաջավոր ջոկատ: Տրոցկիզմի հիմնական գծեր. — մի յերկրում սոցիալիզմի կառուցման հնարայիրության ժխտումը, աշխատավորական գյուղացիական մասսաներին սոցիալիստական շինարարության մեջ ներդրավելու հնարավորության ժխտումը, կուսակցության մեջ յերկաթյա դիսցիպլինայի անհրաժեշտության ժխտումը: Վերականգնման շրջանում «Հերթինդուստրացման» նրանց պահանջը: Սոցիալիստական վերակառուցման ժամանակ ինդուստրացման արագ տեմպերին հակառակ լինելը: 1926 թ. տրոցկիստների միանալը այսպես կոչված «նոր ոպողիցիայի» հետ: Միացյալ ոպողիցիայի տրոցկիստական պրանակորումը. 1926—27 թ. կուլակի վրա հարձակման նրանց ծրագիրը: Հետագայում նրանք դեմ են կուլակության, վորպես դասակարգի, վերացման քաղաքանակիփոխության դիրէը: Կուսակցությունը ջախջանում

և ոսկղիցիան։ Տրոցկիստները շարունակում են հակա-
չեղափոխական աշխատանքը։ Տրոցկու արտաքսումն
ԽՍՀՄ-ի սահմաններից դուրս։

65. Պայքար «ճախ» թեքման դեմ։ Տրոցկիզմի ջախ
ջախվելուց հետո կուսակցության մեջ «ճախ» ոպորտու-
նիստական տարրերի պահպանվելը։ Դրա սոցիալական
արմատները։ «Ճախ» թեքման եյությունը, — առաջ
վագել կտրվել մասսաներից, վարչարարություն, տրոց-
կիստական վերաբերմունք դեպի միջակ գյուղացին։ Կո-
լեկտիվացում հարկադրական միջոցներով, արտելային
ձեի վրայից թռչել։ Խորհրդային առևտորի և փողի լիկ-
վիդացիան համատարած կոլեկտիվացման շրջաննե-
րում։ Չախ թեքման մանր-բուրժուական սոցիալական
արմատները։ Կուսակցության պայքարը «ճախ» թեք-
ման դեմ։

66. Պայքար ազ թեքման դեմ։ Աջերը դեմ սոցիալիզմի
կառուցման բոլշևիկյան տեմպերին, դրանով փաստո-
րեն դեմ սոցիալիզմի կառուցման։ Աջերը դեմ ինդուս-
տրացման քաղաքականության, գյուղատնտեսության
սոցիալիստական վերակառուցման։ անգամ կուլակային
տնտեսությունների զարգացման ոժանշակում։ Աջերը
դեմ են կոլտնտեսությունների կազմակերպչական-տըն-
տեսական ամրապնդման, նրանց բոլշևիկացման։ Նրանք
դեմ են կապիտալիստական մնացորդների դեմ վճռական
պայքար տանելուն։ Աջ վտանգը վորպես մեր շրջանի
գլխավոր վտանգ և կուսակցության վճռական պայքա-
րը նրա դեմ։

67. Պայքարը յերկու նույատի վրա շարունակվում
է։ Աջ և «ճախ» որպիրտունիստների ջախջախումից հետո
ել նրանց պայքարը կուսակցության դեմ ծածկված ձեռվ
շարունակվում է։ Այդ թեքումների դեմ կուսակցու-
թյան պայքարի անհրաժեշտությունը։ Սիրցով-Լոմի-
նաձեյի աջ-ճախ բլոկը, նրա բնույթը և աշխատանքնե-
րը. այդ բլոկի ջախջախումը 1930 թվին։ Խյուտինի ընդ-
հատակյա հակահեղափոխական խմբակի հայտնաբե-
րումը և ջախջախումը 1932թ.։ Եյսմոնդ-Տոլմաչև-Սը-
մինովի հակակուսակցական խմբակի հայտնաբերումը
և ջախջախումը 1933թ. հունվարին։ Աջ ոպորտունիստ-

ները դասակարգային պայքարի «մարման» տեսությունը: Դրա սխալը: Դասակարգային պայքարի ավելի ուշը վելն առանձին ճակատամասերում: Դասակարգային թշնամու և մեր կուսակցության ներսը նրա աղենտուրիայի, աջ և «ձախ» թեքումների դեմ անողոք պայքարի անհրաժեշտությունը:

XVII. ԿՈՄՊԻՆԻՍՏԱԿԱՆ ԻՆՏԵՐՆԱԾԻՈՆԱԼ

68. ՀԱՄԿ(բ)կ և Կոմինտերն: ԽՍՀՄ-ի պրոլետարիատի մի մասը, ՀԱՄԿ(բ)կ Համաշխարհային Կոմունիստական ինտերնացիոնալում, վորպես նրա ամենահին, բազմանդամ, հեղափոխական պայքարում ամենից փորձված և արդեն իր դիկտատուրան հաստատած մի չոկատ: Մեր և միջազգային պրոլետարիատի փոխարձ պարտավորություններն ու ոժանդակությունը՝ համաշխարհային հեղափոխության հաղթանակի ապահովման գործում: Յերկու սիստեմների՝ կապիտալիզմի և սոցիալիզմի պայքարը, վերջինիս առավելությունները: Այդ պայքարում մեր հաղթանակն ապահովելու համար ԽՍՀՄ-ի և կապիտալիստական յերկրների պրոլետարիատների անելիքները:

69. Կոմինտերնի նպատակները և խնդիրները: Կոմունիստական կուսակցությունների խնդիրները բուժժուական յերկրներում: Կոմունիստական ինտերնացիոնալի վերջնական նպատակը կապիտալիստական հասարակության փոխարինումն ե կոմունիստական համարակությամբ: ԽՍՀՄ-ի գոյության և նրա նվաճումների նշանակությունը համաշխարհային հեղափոխության ու կոմունիզմի համար և միջազգային պրոլետարիատի պարտավորությունները ԽՍՀՄ-ի նկատմամբ: Նրանց խնդիրները կապիտալիստական յերկրներում:

70. Ինչպես և կառուցված կոմինտերնը: Կապիտալիստական յերկրների կոմունիստական կուսակցությունների կառուցման սկզբունքը նույնն ե, ինչ վոր ՀԱՄԿ(բ)կ: Կուսակցության կազմակերպության հիմքը, որը վելիչն ե: Կոմինտերնը վորպես վողջ աշխարհի բանվորության միասնական կուսակցական կազմակերպու-

Թյուն: Առանձին յերկրների կուսակցական կազմակերպությունները հաղիսանում են Կոմինտերնի սեկցիաները: Կոմինտերնի գերազույն որգանը հանդիսանում է Համաշխարհային կոնգրեսը, իսկ կոնգրեսների միջև՝ այդտեղ ընտրվող Գործադիր Կոմիտեն: Գործադիր Կոմիտեյին նախագահությունը: Դրանց բոլորի Փունկցիաները և խնդիրները:

71 Կոմինտերնի պայքարը համաշխարհային Հռկտերի համար: Ներկա միջազգային դրությունը և Կոմինտերնի գժվարին ու պատասխանատու խնդիրները: Համաշխարհային տնտեսական ճգնաժամի սրում: Բանվորների դրության վատթարացում: Դասակարգային պայքարի սրում: Մի կողմից հեղափոխական վերելք, մյուս կողմից ֆաշիստական դիկտատուրայի ուժեղացում: Հակասությունների սրումն իմպերալիստական և գաղութային յերկրների միջև: Հակասությունների սրումն իմպերալիստական յերկրների և ԽՍՀՄ-ի միջև. Ինտերվենցիայի վտանգի ուժեղացում: Վերչին հակասությունը, վորպես գլխավոր և հիմնական:

Բուրժուական յերկրների կոմունիստական կուսակցությունների հիմնական խնդիրները— պայքար բանվոր դասակարգի մեծամասնության համար. պայքար կապիտալի հարձակման դեմ և պրոլետարիատի հակահարձակման կազմակերպումը: Պայքար բուրժուական դիկտատուրայի բոլոր ձեւերի և արտահայտությունների դեմ: Պայքար իմպերիալիստական պատերազմների և ԽՍՀՄ-ի դեմ կազմակերպվող ռազմական ինտերվենցիայի դեմ: Աշխատավոր գյուղացիության մասսաների դրավման խնդիրը: Կոմ. կուսակցությունները պետք են իրենց կողմը գրավեն բանվոր դասակարգի մեծամասնությունը, բանվորներին կազմակերպեն պրոլետարական հեղափոխության, պրոլետարիատի դիկտատուրայի լոգումների շուրջը և մասսաներն առաջնորդեն դեպի կապիտալիզմը կործանելու և անդասակարգ հասարակություն կառուցելու գործը:



23759

ԳԻՄ 75 ԿՈԹ.

154.



Программа
Средней школы
по обществоведению
5—6 группы

ГИЗ ССР Армении, Еревань, 1988 ԳԱԱ Հիմնարար Գիլ. Գրադ.

